ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1993Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

Հունիս, № 5 (160), 2002թ.

ՈՒՀԱՑԱԾ ԳԱՐՈՒՆ... ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԿԼԻՆԻ ԱՄԱՌԸ...

Թեև ամառն իր իրավունքի մեջ է մտել, Հայոց լեռները դեռ ձյունածածկ են: Այո, այս պարագայում կարելի է ասել, թե բնությունն էլ պայքարում է իր իրավունքի համար:

Շուկայում հայտնվել է կեռասը, վերջանում է ելակը, սադախլուներից բերված կարտոֆիլը ողողել է հայոց շուկան, իսկ հայ գյուղացին տեղ-տեղ դեռ ցանքի է սպասում: Գիտնականների, էկոլոգների՝ մեր մոլորակի ընդհանուր ջերմացման միտումի մասին գուշակությունը չգիտես ինչու Հայաստանին չի վերաբերում՝ ծմեռը ցուրտ էր ու երկար, գարունը՝ ձյունա-կարկտահարված, ամառը սկսվել է... խոնավ է ու զով...

Իսկ գյուղացին շվարած երկնքին է նայում. էլ ի՞նչ անակնկալ կարող է մատուցել մեզ: Գյուղացին շվարել է. հողը զուրկ է գիտական որևէ միջամտությունից, նախկին ցանքատարածությունները դառնում են անմշակ. անպտուղ հողեր. լեռնային գյուղերի շատ բնակիչներ իրենց հատկացված սեփական հողակտորները նույնիսկ չեն մշակում: Կատարելով տարրական հաշվարկ, նրանք համոզվել են, որ բարձր լեռնալանջերից մի քանի հարյուր մետր հողից հնձած խոտը տեղափոխելու համար ավելի շատ վառելիքի ու տրանսպորտային ծախսեր են հարկավոր, քան բերքից ստացված եկամուտն է:

Գյուղը փորձության առաջ է...

Անձրևից, ձյունից ու կարկուտից հալածված հայոց հողը կդիմավորի հուլիսը

ու Ծարդիկ կսկսեն տրտնջալ երաշտից, սևահողը կչորանա, կբացվեն բույսերի արմատները ու կսկսվի պայքարը ջրի համար:

Իսկ Հայոց լեռնաշխարհից միլիարդավոր խորանարդ մետր ջուր կհոսի կիրճերով ու ձորերով դեպի Արաքսի հովիտն ու, լցվելով մեր մայր գետը, կգնա դեպի Կասպից ծով...

Երազող մի լավատես առաջարկել էր Զանգեզուրի լեռներում կուտակված քաղցրահամ ջրերի հունը փոխել և խողովակներով ուղարկել դեպի Մերձավոր Արևելք՝ դեպի Սաուդյան Արաբիա: Հաշվարկ էր արել, թե խողովակաշարի ծախսերը հանած, քանի միլիարդի օգուտ կբերի այդ ձեռնարկումը: Ցավոք, միշտ չէ, որ նման լավատեսական հաշվարկը համապատասխանում է իրականությանը, իրատեսությանը: Հիշո՞ւմ եք, չէ՞ որ մեր գիտնականներից մեկը քաղաքական ակտիվության տարիներին քաղաքական կոչեր անելիս, չէր մոռանում ապացուցել, որ հայ ժողովուրդը միայն «Ջերմուկ» արտահանելով կարող է հարուստ ապրել: Արտահանեցին: Իմ բարեկամ դեսպաններից մեկը պատմել է, թե երբ ձեռնարկվեց «Ջերմուկի» արտահանման գործը, հանքային ջրի միջազգային շուկան վաղուց զբաղված, կանոնակարգված էր ու մեր «Ջերմուկը» գոնե հիմա չի դիմանում «Վիշիի», «Լյո դե վիվրի» և «Էվիանի» մրցակցությանը, ու մեր հարևան երկրում մի քանի շիշ վաճառվելուց հետո՝ մշտական գրանցում ստացավ ներքին շուկայում:

Մենք ուշանում ենք, պարոններ, մենք կորուստներ ենք տալիս...

Իսկ մեր լեռներում դեռ ցուրտ է, ու լեռնալանջերը ձյունածածկ են: Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր հողը, արոտավայրերը սեփականաշնորհված են երկու հարյուր տարի առաջ ու ստեղծված է հողամշակման ու անասնապահության բարձրագույն տեխնոլոգիա, գյուղնախարարությունը պաշտպանության նախարարության համարժեք նշանակություն ունի: Իսկ մեզ մոտ (որտեղ շատ են սիրում իբր օրինակ վերցնել հզորներից) գյուղնախարարությունը գյուղացուն վաղուց է մոռացել: Ի՞նչ առաքելություն ունի այդ նախարարությունը, եթե գյուղում չկա օղակ, համակարգ, որը գիտական ու կազմակերպչական հարցերը հասցնի գյուղացուն: Ո՞վ պետք է վճարի գյուղում բնակվող գյուղատնտեսին, սերմնաբույծին, անասնաբույծին, զոոտեխնիկին, եթե մեր համայնքներում դաշտերն ու այգիները բզիկ-բզիկ արված անհատին են պատկանում, եթե գյուղացին մեկ-երկու (գուցե մի քիչ ավել) կով ունի ու առավոտները, ինչպես 100 տարի առաջ, շալակած կաթն ու մածունը քաղաք է բերում ու վաճառում՝ տնից-տուն, թաղից-թաղ թափառելով: Տարիներ առաջ մեր իսկ առաջարկությունը՝ մեր թաղամասերում ստեղծել թարմ կաթնեղենի վաճառքի խանութներ, մնացին անհետևանք: Արդյունքը՞... խնդրեմ, հայ գյուղացին իր կովի ու ոչխարի թարմ կաթն ու մածունը փողոցներում վաճառում է մեկ լիտրը 200 դրամ, իսկ քաղաքացին գերադասում է խանութներից գնել տարբեր ֆիրմաների կաթն ու մածունը՝ կրկնակի գնով: Ի՞նչ անի գյուղացին. նա չի կարող գովազդել իր ապրանքը, շուկա հանել գեղեցիկ փաթեթավորված ու տարաներով, նա չի դիմանում մրցակցությանը, քանզի չունի տեր, չունի կազմակերպիչ: Իսկ ով, եթե ոչ գյուղնախարարությունը, գյուղատնտեսական ակադեմիան, գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտները պետք է օգնեն գյուղացուն՝ լուծելու քրտինքով ստացված մթերքների վաճառքը, որը կբարելավի նրա նյութական վիճակը, կօգնի նաև սպառողին:

Հիմա սովորույթ է դարձել կրկնել, թե ով է տերը, ո՞ւմ դարդն է դա: Ասում են բոլորը՝ շարքային գնորդն ու վաճառողը, պաշտոնյան ու գիտնականը: Ո՞վ է տերը... Ասե՛նք ով է... Գյուղացին նույն տառապանքով ապրող արտադրողն է, շուկան վերավաճառողների ձեռքին է, իսկ գյուղատնտեսական բնագավառի պաշտոնյաների ու գիտնականների քանակը հազարների է հասնում: Ուրեմն, ինչո՞ւ ենք մենք ապավինում միայն բնությանը, երբ պետք է մեր գիտության նվաճումները գյուղ մտնեն, գյուղ գնան և՝ գյուղական գիտության ներկայացուցիչները և օգնեն գյուղացուն՝ նվազագույնի հասցնելու բնության արհավիրքների հետևանքները, թույլ չտալու, որ գյուղը դառնա մի խումբ անօգնականների ու միայնակ ծերերի բնակավայր: Չէ՞ որ դեռ վաղուց հայտնի է, որ երկրի, ժողովրդի կենսունակությունը միայն կոմպյուտերների և նրանց կցորդ դարձած կոմպյուտերագործների մեջ չէ, Հայոց երկրի ապագան բարգավաճ ու ուժեղ գյուղն է, հարուստ, բայց իր հողին կապված գյուղացին:

Ահա այս մտքերով տարված օրերս վերադարձա գյուղից: Ամպերն իջել էին լեռնալանջերով, լցվել ձորակները: Այնտեղ նորից կարկուտ էր տեղում, բազմիցս ծեծված հողը նորից ծածկելով սպիտակով:

Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՈՂԱԳՈՐԾԸ

Գարունն ավարտվեց... Շատ տեղերում ցանք անգամ չարեցին, իսկ շատ տեղերում էլ ջրի առատությունից սևահողը կարծրացավ, ծեծվեց ու... Ու ինչպես շատ ենք լսել արդեն՝ կամ հորդ անձրևի պատճառով բերքը փչացավ, կամ չորության, երաշտի պատճառով բերք չեղավ: Ոչինչ, արդեն սովորել ենք, ու թեև շուկան նույն մարդկանց ձեռքում է, ու առատ է ամեն ինչ, բայց հողի հետ անմիջական գործ ունեցող գյուղացին մուտք չունի շուկա: Ու նրանց համար, ովքեր վերավաճառողներից բացի ուրիշ հիշարժան դեմք վաղուց չեն տեսել, հրապարակում ենք ահա այս լուսանկարը՝ *հողագործը...*

Այս կովը նրա տիրոջ միակ սեփականությունն է: Ընթերցող, մի տանջվիր նմանությամբ որոշել թե որ գյուղից է լուսանկարը: Այն արված է Սենեգալում...

ՄՐՑՈՒՅԹ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ԳԱԱ Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար:

Տնօրենի պաշտոնում թեկնածուների առաջադրման իրավունքը, համաձայն ընդունված կարգի, պատկանում է ՀՀ ԳԱԱ բաժանմունքի բյուրոյին, ինստիտուտի գիտական խորհրդին, բուհերի գիտական խորհուրդներին, ՀՀ ԳԱԱ անդամներին:

Թեկնածուների հիմնավորված առաջարկությունները մինչև 2002թ. հուլիսի 25-ը ուղարկել հետևյալ հասցեով՝ Երևան 375019, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունք, հեռ.՝ 52-70-03:

ՀՀ ԳԱԱ
ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ֆրանսիական «Մարի Ֆրանս» հանդեսը իր էջերը նվիրել է պատանիների, մեծահասակների հագուստի գովազդին: Կասեք՝ ի՞նչ զարմանալու բան կա. արևմուտքում հագուստի գովազդ են հրապարակում նույնիսկ քաղաքական հանդեսները: Պարզվում է, ուշագրավ է այս գովազդը: Հանդեսի այդ համարը գովազդում է գյուղական կյանքը՝ հագուստ, բնակարանի կահավորման պարագաներ, գյուղացու փոխադրամիջոցներ: Տեսեք պատանի ֆերմերի այս հագուստը... Տարիներ առաջ «Ավանգարդ» թերթում գովազդված երիտասարդ անասնապահի արտահագուստը և կովբոյ ֆերմերի լայնեզր գլխարկը բուռն դատապարտման արժանացավ վերևից. ի՞նչ է, մեր կոլխոզնիկին ուզում եք արևմտյան բարքեր սովորեցնե՞լ...: Զայրացած ասացին մեզ:

ՃԱՌԱՅԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ. ԱՀԱ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ հետ

– Մեծարգո պրոֆեսոր: «Գիտություն» թերթի խմբագրությունը դեռ չէր հասցրել շնորհավորել Ձեզ՝ ծննդյան հոբելյանի առթիվ, երբ առաջացավ շնորհավորանքի նոր առիթ. Դուք ընտրվեցիք Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Սրտանց շնորհավորում ենք Ձեզ, մաղթում առողջություն և հաջողություններ՝ ստեղծագործության և գործունեության նոր ոլորտում:

– Շնորհակալություն: Հաճելի է, երբ քեզ շնորհավորում է թերթը:

– Հարգելի ակադեմիկոս, հետ նայելով Ձեր կյանքի անցած ճանապարհին, տարիների հեռվից ինչպե՞ս կգնահատեիք Ձեր նախասիրությունը պատմության գիտության նկատմամբ և գո՞հ եք, արդյոք, որ Ձեր ողջ կյանքը նվիրել եք պատմագրությանը:

– Մեծարգո պրոֆեսոր: «Գիտություն» թերթի խմբագրությունը դեռ չէր հասցրել շնորհավորել Ձեզ՝ ծննդյան հոբելյանի առթիվ, երբ առաջացավ շնորհավորանքի նոր առիթ. Դուք ընտրվեցիք Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Սրտանց շնորհավորում ենք Ձեզ, մաղթում առողջություն և հաջողություններ՝ ստեղծագործության և գործունեության նոր ոլորտում:

– Շնորհակալություն: Հաճելի է, երբ քեզ շնորհավորում է թերթը:

– Հարգելի ակադեմիկոս, հետ նայելով Ձեր կյանքի անցած ճանապարհին, տարիների հեռվից ինչպե՞ս կգնահատեիք Ձեր նախասիրությունը պատմության գիտության նկատմամբ և գո՞հ եք, արդյոք, որ Ձեր ողջ կյանքը նվիրել եք պատմագրությանը:

– Այո՛, և՛ գոհ, և՛ բավարարված: Եթե նորից հարց առաջանար մասնագիտական ընտրության, անշուշտ, կընտրեի մեր ժողովրդի հերոսական և ողբերգական անցքերով լի պատմությունը: Սերը և հետաքրքրությունը դեպի պատմությունը ինձ մոտ առաջացել է աշակերտական տարիներից. դպրոցում ունեցել եմ շատ լավ ուսուցիչներ, համալսարանում՝ ճանաչված դասախոսներ՝ Վահան Ռշտունի, Ստեփան Ներսիսյան, Բենիամին Հարությունյան, Հայկազ Ժամկոչյան, Մկրտիչ Ներսիսյան, Աբգար Հովհաննիսյան, Սուրեն Երեմյան, Ժենյա Միրզախանյան...

Սակայն իմ առաջին ուսուցիչները եղել են ծնողներս, որոնք Կարսի մարզի Բաշգյուղից գաղթել և բնակություն են հաստատել Ղարաքիլիսայում (Վանաձոր): Ծնողներիցս անընդհատ լսել եմ էրգրի մասին, վերապրել նրանց ցավն ու ողբերգությունը, մեր հարազատների ու հայրենակիցների անդառնալի կորուստները: Լսել եմ, որ 1918թ. գաղթի ժամանակ Արաքսի այս ափ չեն անցել, մնացել են ճանապարհին պապերս ու տատերս, հորեղբայրներ ու հորաքույրներ, մորեղբայրներ և մորաքույրներ՝ 20 հոգի: Դրանց մեջ և 17-ամյա հորեղբայրս՝ Հրանտը, որի անունով էլ կնքեցին ինձ Ղարաքիլիսայում: Այս ամենը, անշուշտ, խաղացին իրենց դերը իմ մասնագիտական ընտրության գործում: Իմ ուսումնասիրության առարկան դարձան 1917 – 1921 թվականների պատմության հարցերը և ընդհանրապես նոր պատմության հարցերը՝ սկսած Հայկական հարցի միջազգայնացումից:

– ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը երկար տարիներ աշխատել է հայագիտական հաստատություններում, ղեկավարել է ակադեմիայի պատմության ինստիտուտը: Պարոն Ավետիսյան, ի՞նչն եք կարևորել ինստիտուտի կոլեկտիվի համար: Չէ՞ որ խորհրդային պատմագրության շատ հայեցակետեր, բնականաբար, վերանայվել են: Նոր ժամանակները, անշուշտ, նոր խնդիրներ են առաջադրել պատմաբաններին: Մասնավորեք, խնդրեմ, այդ խնդիրները: Մեր ժողովուրդը ե՞րբ իր սեղանին կունենա 20-րդ դարի ամենավճռորոշ իրադարձությունների ճշմարիտ շարադրանքը՝ Առաջին Հանրապետություն, խորհրդայնացում, խորհրդային տարիներ, ԽՍՀՄ փլուզման ծնունդ Հայաստանի անկախ Հանրապետություն:

– Հայաստանի անկախության հաստատումը նոր խնդիրներ առաջադրեց նաև պատմական գիտությանը: Առաջ եկավ հայ ժողովրդի քաղաքական պատմության, ազգային-ազատագրական շարժումների, ազգային կուսակցությունների ծագման, գաղափարախոսության, տեսության և գործունեության, Հայկական հարցի և Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության, հայ եկեղեցու, մեր պատմության մեջ քրիստոնեության դերի հիմնահարցերի, Սփյուռքի պատմության խորը ուսումնասիրության հարցը: Առանձնահատուկ նշանակություն ստացավ անհատի պաշտամունքի տարիներին ազգային ազատագրական պայքարի անվանարկված հերոսների, մեր ժողովրդի երախտավորների, կամայականության զոհերի բարի անվան վերականգնման, պատմության սպիտակ էջերի վերացման խնդիրը:

20-րդ դարը, հիրավի, մեր պատմության ամենավճռորոշ իրադարձություններով լի ժամանակաշրջան է: Եղեռն, հայոց պետականության վերականգնում՝ Առաջին Հանրապետություն: Խորհրդային Հանրապետության 70 տարիներ, ԽՍՀՄ-ի փլուզում՝ Հայաստանի անկախ Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Այս ժամանակաշրջանի և պատմական երևույթների ուսումնասիրությունը կատարվում է պատմության ինստիտուտում ստեղծված համապատասխան բաժիններում՝ այժմ թեմատիկ խմբերում: Ճիշտ է, ամբողջական աշխատանքներ դեռ չեմ հրատարակվել, և շատ անելիքներ կան ճշմարտացի պատմությունը վերհանելու և հանրությանը ներկայացնելու համար, սակայն լույս են տեսել մի շարք մենագրություններ, դպրոցական դասագրքեր, փաստաթղթերի ժողովածուներ, արժեքավոր հոդվածներ, որոնցում արխիվային հարուստ նյութերի հիման վրա խորությամբ լուսաբանվել են 20-րդ դարի վճռորոշ հիմնահարցերը:

Վերջին տարիներին լույս են տեսել ակադեմիկոս Հ.Սիմոնյանի «Անդրանիկ», պատմական գիտությունների թեկնածու Վ.Մելիքյանի «Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը», պատմական գիտությունների դոկտոր Ա.Հակոբյանի «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը և կուսակցությունները», պատմական գիտությունների դոկտոր Հ.Հարությունյանի «Լեռնային Ղարաբաղը 1917 – 1921թթ.», պատմական գիտությունների թեկնածու Գ.Մախմուրյանի «Ազգերի լիգան, Հայաստանը և Հայկական հարցը», Մ.Կարապետյանի «Հայաստանի Հանրապետության բանակը 1918 – 1920թթ.», «Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում. 1914 – 1917թթ.», իմ երեք մենագրությունները՝ «Բրեստ-Լիտովսկ. ինչպե՞ս բռնակցվեցին Թուրքիային Կարսը, Արդահանը, Բաթումը», «Հայկական հարցը 1918 թվականին», «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս»:

Առանձնապես ցանկանում եմ առանձնացնել ակադեմիկոս Գ.Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները. 1917 – 1923 թվականներին» մենագրությունը և Գ.Գալոյանի ու պատմական գիտությունների դոկտոր Վ.Ղազախեցյանի ղեկավարությամբ և ակտիվ մասնակցությամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետության քաղաքական պատմությունը. 1918 – 1920թթ.» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն:

Արժեքավոր ժողովածուներ են ակադեմիկոս Վ.Միքայելյանի ստեղծած գործերը՝ «Լեռնային Ղարաբաղ. 1917 – 1923 թվականներ» և «Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերում ու նյութերում» փաստաթղթերի ժողովածուները:

20-րդ դարի պատմությունը նորովի լուսաբանված է 5-10-րդ դասարանների պատմության դասագրքերում և 2001թ. հրատարակված «Պատմություն. Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում» 9-10-րդ դասարանների համար գրված դասագրքերում:

Հրատարակվել են մի շարք աշխատություններ՝ նվիրված Խորհրդային Հայաստանի պատմությանը: Կցանկանայի առանձնացնել Ա.մանուկյանի «Քաղաքական կյանքը Հայաստանում 1921 – 1940 թվականներին» և Ա.Վիրաբյանի «Ստալինից Խրուշչով. Քաղաքական կյանքը Հայաստանում» գործերը:

Ամբողջական պատմությունը կտրվի Հայ ժողովրդի պատմության քառահատորյակի 4-րդ հատորում, որը կընդգրկի 1917 – 2002 թվականների պատմությունը:

– Վերջերս Ձեր ներկայացմամբ ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում ընդունեց «Հայ ժողովրդի պատմության» քառահատորյակի պատրաստման և հրատարակման մասին: Ի՞նչն է կարևորվելու այդ հրատարակության շարադրանքում և ինչո՞ւ է առաջացել քառահատորյակի անհրաժեշտությունը:

– Հայոց ամբողջական պատմության ստեղծման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1967 – 1984 թվականներին պատմության ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը, որում բազմաթիվ հարցեր լուսաբանվել են առաջին անգամ: Գ.Գալոյանի ղեկավարությամբ ստեղծված ութհատորյակը արժանացավ Հայաստանի պետական մրցանակի:

Սակայն խորհրդային շրջանում, գաղափարա-քաղաքական կապանքների առկայության պայմաններում բազմապիսի խնդիրներ կամ մեկնաբանվել են միակողմանի դասակարգային պայքարի, աշխարհընկալման «սոցիալիստական ըմբռնման» գաղափարախոսության տեսանկյուններից, կամ առհասարակ շրջանցվել: Ուստի ներկա փուլում հայոց ամբողջական և հիմնարար պատմության ստեղծումը դարձել է ժամանակի հրամայականը և ունի բացառիկ գիտաքաղաքական, գործնական-դաստիարակչական ու ճանաչողական նշանակություն: Այդ բացը լրացնելու նպատակով էլ Ազգային ակադեմիայի նախագահության որոշմամբ պատմության ինստիտուտը հանրապետության հայագիտական հաստատությունների մասնագետների ընդգրկմամբ ձեռնամուխ է եղել հայ ժողովրդի պատմության քառահատորյակի ստեղծման աշխատանքներին:

Առաջին հատորում, որն ընդգրկում է Հայաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 9-րդ դարը, առանձնակի ուշադրություն է հատկացվել հայոց ինչպես հնագույն՝ մ.թ.ա. 3 – 2-րդ հազարամյակների պետական կազմավորումների, այնպես էլ Վանի (մ.թ.ա. 9 – 6-րդ դդ.), Երվանդունյաց, Արտաշեսյան, Արշակունյաց պետականությունների հիմնահարցերի վրա:

Պատմագիտական, հնագիտական ու լեզվաբանական նոր նյութերի քննությամբ հատուկ հետազոտության առարկա են դառնալու հայ ժողովրդի կազմավորման, հայերի հնդեվրոպական ծագման, նրանց տեղաբնիկ լինելու հարցերի վրա: Հատորում ցույց է տրվելու Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության շարունակականությունն ու ներքին շաղկապվածությունը, ըստ արժանվույն ներկայացվելու է Հայ առաքելական եկեղեցու ազգանվեր գործունեությունը:

Երկրորդ հատորը ներառնելու է Հայոց Բագրատունիներից մինչև 18-րդ դարի կեսերի պատմական անցքերը: Հիմնովին հերքվելու են թուրք-ադրբեջանական քաղաքական շրջանակների և պատմագրության կողմից հրապարակ հանված կեղծ դրույթները միջնադարում հայկական պետականության և ազգային ինքնության «բացակայության» վերաբերյալ: Լայնորեն շարադրվելու է ինչպես Բագրատունիների, Զաքարյանների, Կիլիկյան Հայաստանի պետականությունների, այնպես էլ ավելի ուշ՝ Արցախի, Սյունիքի մելիքությունների, 16– 18-րդ դարերի ազատագրական շարժումների պատմությունը:

Հայոց պատմության նոր ժամանակաշրջանի հիմնախնդիրները լուսաբանվելու են 3-րդ հատորում, որը ընդգրկում է 18-րդ դ. կեսերից մինչ 1917թ. փետրվարյան հեղափոխությունը: Իրենց լուծումը կստանան մի շարք հանգուցային թեմաներ՝ մասնավորապես հայ ազգային-ազատագրական պայքարի, սոցիալական և սոցիալիստական շարժումների, ազգային կուսակցությունների, առաջին համաշխարհային պատերազմում կամավորական ջոկատների գործունեության գնահատականի, 1915թ. Հայոց Մեծ Եղեռնի քաղաքական դրդապատճառների ու բարոյա-քաղաքական հետևանքների հիմնահարցերը:

Չորրորդ հատորում նոր փաստաթղթերի հիման վրա նորովի կշարադրվի Առաջին Հանրապետության և խորհրդայնացման, Մոսկվայի խորհրդաթուրքական պայմանագրի, ՆԷՊ-ի, նախապատերազմյան և հետպատերազմյան ժամանակաշրջանների պատմությունը: Նրանում տեղ կգտնեն Ստալինյան քաղաքական բռնաճնշումների, հայ առաքելական եկեղեցու, հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունների, սփյուռքահայ համայնքների, երկրորդ համաշխարհային պատերազմում հայերի մասնակցության, խորհրդային Հայաստանի տնտեսական, մշակութային նվաճումների և այլ հիմնահարցեր:

Այս հատորի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև 8-հատորյակում Հայաստանի 1970 – 2000 թվականների պատմության բացակայությամբ:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԾԱՌԱՅԵԼ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆԸ. ԱՀԱ ՊԱՏՄԱԲԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ հետ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Բազմահատորյակի եզրափակիչ մասում հատուկ ուշադրություն է հատկացվելու Արցախյան համազգային շարժման և հայոց անկախ պետականության վերականգնման ու կայացման, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներքին և արտաքին հարաբերությունների ինստիտուտներին:

Այդ դժվարին խնդրի լուծման համար այժմ առկա են բոլոր պայմանները՝ գաղտնազերծված հարուստ արխիվային ու հրատարակված նյութ, հրապարակում եղած արժեքավոր աշխատություններ, գիտական կարող ուժ:

– Ձեր գրիչը չափազանց բեղմնավոր է եղել, և Դուք հաճախ եք մեզ հաճելի անակնկալներ մատուցում նոր մենագրություններով, աշխատություններով: Ինչի՞ վրա է աշխատում ներկայումս պատմաբան Հրանտ Ավետիսյանը:

– Այժմ հրատարակության ընթացքում է «Հայերը Բաքվի պաշտպանությունում. 1918թ. հունիս-սեպտեմբեր» աշխատությունը, փաստաթղթերի և նյութերի հավելվածով:

Ավարտին է մոտենում «Ռուսական կայսերական բանակի հայ գեներալները» աշխատությունը, որտեղ տրվում են 155 զորավարի կենսագրական տեղեկություններ՝ սկսած 1734 թվականից մինչ 1917 թիվը:

– Դուք բազմազբաղվածության հետ միաժամանակ համատեղում եք մանկավարժական գործունեությունը: Հարգարժան պրոֆեսորը ի՞նչ է մտածում իր այսօրվա ուսանողների մասին, ի՞նչով են այսօրվա ուսանողները տարբերվում Ձեր ժամանակվա և անգամ 10-15 տարի առաջվա ուսանողներից:

Եվ ընդհանրապես, երիտասարդ պատմաբանների պատրաստման, պատմական գիտության երիտասարդացման մասին, որն այսօր լուրջ և անհրաժեշտ խնդիր է:

– Այսօրվա ուսանողությունը, անշուշտ, ավելի շատ ինֆորմացիա ունի քան մեր ժամանակվա, նույնիսկ 10-15 տարվա առաջվա ուսանողությունը, ավելի զարգացած է, կան դասագրքեր, որակյալ դասախոսներ: Մնում է, որ պարտաճանաչ կատարեն իրենց պարտականությունները: Մեծ մասն, իհարկե, պարտաճանաչ է: Ձգտումը դեպի գիտությունը զգացվում է մագիստրատուրայում սովորող երիտասարդների մոտ, գրում են հետաքրքիր ավարտական աշխատանք, նորովի և համարձակ մոտենում հիմնահարցերի բացահայտմանը: Սակայն բոլորին չէ, որ հաջողվում է ընդունվել ասպիրանտուրա, շարունակել կատարելագործվել, որովհետև ասպիրանտական տեղերը չափազանց սահմանափակ են: Յուրաքանչյուր ինստիտուտ կարողանում է ընդունել մեկ ասպիրանտ, իսկ դրանով գիտության զարգացում հնարավոր չէ:

Եվ մի կարևոր խնդիր: Պատմագիտության երիտասարդացման հարցը անլուծելի կմնա, քանի դեռ մասնագետը երաշխիք չի ունենա, որ այդ գիտությունը իրեն հնարավորություն կտա ապրել և ընտանիք պահել: 8-10 հազար աշխատավարձի հեռանկարը հազիվ թե հրապուրի երիտասարդներին:

– Այսուհետև ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարը ղեկավարելու է հումանիտար բաժանմունքը, ուր կենտրոնացված են հայագիտությունը ներկայացնող գիտական ինստիտուտները: Ձեր գործունեությունը և նպատակաուղղվածությունը հայագիտության այսօրվա գլխավոր խնդիրների, նրա զարգացման հիմնական միտումների վերաբերյալ:

– Հայագիտությունը Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, հանրապետության գիտության առաջնային խնդիրն է: Բաժանմունքը միավորում է 10 գիտահետազոտական հիմնարկություն: Հիմնահարցերը բազմազան են:

Հայերի, որպես ժողովրդի, կազմավորման, պետականության ստեղծման ու զարգացման պատմության, հայոց պետականության վերականգնման և հայ ժողովրդի անկախության համար մղած պայքարը (սկսած 16-րդ դարից մինչև մեր օրերը) Հայկական հարցի, օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության, անկախ Հայաստանի հիմնահարցերը:

Հայ նյութական մշակույթի հնագիտական, ճեռագրագիտական, մարդաբանական ուսումնասիրություններ:

Հայոց լեզվի պատմության (հայոց լեզվի ծագումը և զարգացումը), ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի և գործառնության, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների փոխհարաբերության հարցերի, ժամանակակից հայերենի կանոնակարգման խնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ, հայ բարբառագիտական ատլասի կազմում, ազգագրական, ժողովրդագրական, բանագիտական, ֆոլկլորային բնույթի ուսումնասիրություններ, հայ արվեստի և գրականության պատմության տեսության ուսումնասիրություն, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցերի ուսումնասիրություն, Հայաստանի Հանրապետությունը Անդրկովկասյան-Մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գոտում և այլ հիմնախնդիրներ:

Այս հիմնահարցերը կընդգրկվեն գործունեության նպատակային և հիմնավոր ծրագրի մեջ և կդառնան աշխատանքային ծրագիր մոտակա և առաջիկա տարիների համար:

– Ուրեմն, հաջողություն մաղթենք Ձեզ և բաժանմունքի գիտական հաստատություններին՝ այդ ծրագրի իրականացման գործում և, անշուշտ, շնորհակալություն՝ հարցազրույցի համար:

Ակադեմիկոս Հրանտ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ հետ զրուցեց ԼԵՌՈՒՇԱՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ

ԸՆԴԵՐՔԸ ՀԱՐՈՒՍՏ Է, ԻՍԿ Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ՀԱՐՍՏԱՆԱ ԵՐԿԻՐԸ

(Սկիզբը՝ NN 1 – 4-ում)

Դիատոմիտները, որոնք արտասահմանյան գրականության մեջ անվանվում են նաև «Կիզելգուր» կամ «ինֆուզորային հողեր», հանդիսանում են արդյունաբերության ու շինարարության կարիքների համար բազմաճյուղ կիրառության հումք: Հայաստանը հարուստ է դիատոմիտներով, որոնք կարող են կիրառվել սննդի և քիմիական արդյունաբերության մեջ, որպես.

– զտիչ նյութեր՝ շաքարային օշարակների, բուսական յուղերի, գլիցերինի, ինսուլինի, մրգահյութերի, գինիների, գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների մաքրման, գունազրկման և պինդ ու հեղուկ մասնիկները տարանջատելու նպատակներով,

– կլանիչ նյութեր՝ քիմիական արդյունաբերություններում՝ թթուների կլանման, հեղուկների ախտահանման, օգտագործված քսուկային յուղերի վերականգնման և նավթային գոլորշիների կլանման համար, քրոմոտոգրաֆիայում՝ հեղուկ և գազային խառնուրդների քրոմոտագրային տարանջատման համար,

– լցանյութեր՝ պլաստմասսաներում, ռետինատեխնիկական և թղթի արդյունաբերություններում,

– շինարարության մեջ՝ ցեմենտի, խեցեգործական իրերի և այլ արտադրություններում, ձայնա և ջերմամեկուսիչ նյութեր պատրաստելու հումք և այլն:

Դիատոմիտներից պատրաստվում են նաև կատալիզատորի կրողներ, լաքեր ու ներկեր, քաղաքացիական օդագնացության մեջ կիրառվող ինդիկատորային խողովակներ և այլն: Հայկական դիատոմիտներից պատրաստված արտադրանքները, հատկապես զտափոշիները, մեծ պահանջարկ կարող են ունենալ Եվրոպայի բոլոր երկրների կողմից: Ասվածը հաստատելու համար բերենք մի օրինակ. գարեջրի և գինիների մաքրման (սպիտակեցման) համար Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը 1987 – 1988թթ. ցանկություն էր հայտնել գնել տարեկան 10 հազ. Ջրաձորի հանքավայրի դիատոմիտներից թողարկվող որակյալ զտափոշիներ, որոնց արտադրությունը Հայաստանում այդպես էլ չկազմակերպվեց: Նշենք, որ դիատոմիտներից պատրաստված զտափոշիները, միջազգային շուկայում, կարող են գնահատվել 1000-ից մինչև 1100 դոլար, այսինքն նույնքան, որքան և պեռլիտներից թողարկվող զտափոշիները:

Հայաստանի ընդերքը հանդիսանում է բնական ցեոլիտների հզոր շտեմարան: 70-ական թվականների սկզբին Հայաստանում հայտնաբերվել են մի քանի հանքավայր և հանքաերևակում, որոնց մեջ ուրույն տեղ է զբաղեցնում Նոյեմբերյանի հանքավայրը իր հանքատեսակների բազմազանությամբ, ռեսուրսների մեծությամբ՝ հանքավայրը շահագործելու համար շատ նպաստավոր երկրաբանական, աշխարհագրական և լեռնատեխնիկական պայմաններով:

Ցեոլիտները լայն կիրառություն և բազմազան ոլորտի հումք են թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության և թե շրջակա միջավայրի պահպանության մեջ: Ադսորբցիոն և մոլեկուլյար-մաղային հատկությունների վրա է հիմնված ցեոլիտների կիրառությունը գազային և նավթաքիմիական արդյունաբերության մեջ՝ գազերի մաքրման և չորացման նպատակով, օդից թթվածնի ու ազոտի անջատման համար, որոնք օգտագործվում են ամոնիակի և ամոնիակային սելիտրայի արտադրության մեջ, վառելիքներ գտել գյուղատնտեսության մեջ, որտեղ նրանք բարձրացնում են հողի բերքատվությունը, բարելավում վերջինիս կատիոնափոխանակման հատկությունը, նպաստում խոնավության պահպանմանը և պարարտանյութերը պաշտպանում լվացումից: Ընտանի կենդանիներին և թռչուններին ցեոլիտ պարունակող կերով կերակրելիս մեծանում է աճող մատղաշի քաշը, կենդանիներն ազատվում են քորից, աճում է կաթնատվությունը, բարձրանում է կաթի և մսի որակը և այլն:

Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկի մարզի գիտնականները՝ բնական ցեոլիտների հենքի վրա մշակել են տասը անուն օրգանական ակտիվ հավելում պարունակող արտադրանքներ (սննդանյութեր ու դեղամիջոցներ), որոնք արդեն իսկ փորձարկվել են բազմաթիվ ու բազմապիսի (30-ից ավելի) հիվանդություններով տառապող՝ մի քանի տասնյակ հիվանդների բուժման համար և ամեն դեպքում ստացել են միանգամայն դրական արդյունք:

Բնական ցեոլիտների հանքավայրեր են հայտնաբերվել նաև Ադրբեջանում, Վրաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Թուրքմենիայում և այլ վայրերում, որտեղ ցեոլիտները որպես հանքանյութային նոր տեսակի օգտակար հանածոներ ավելի մեծ ուշադրության են արժանացել, քան մեզ մոտ՝ Հայաստանում:

ՀՀ Նոյեմբերյանի հանքավայրի հենքի վրա ցեոլիտային արտադրանքի լայն տեսականու արդյունաբերական արտադրության կազմակերպումով ոչ միայն տեղական արդյունաբերության ու գյուղատնտեսության կարիքների բավարարումը կապահովվի, այլև դրանց կիրառությունը կօգնի լուծել մեր ժողովրդի ամենակենսական հարցերից մեկը՝ շրջակա միջավայրը վտանգավոր չափերի հասած աղտոտումից մաքրելու խնդիրը:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրահանքաբանական գիտությունների դոկտոր

(Շարունակելի)

ԶԱՐԿԵՐԱԿ. ՍԵՎԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՄԲ

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ՀՀ ԳԱԱ նախագահությունը հերթական նիստում լսեց Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվությունը 2000 – 2001թթ. գիտական, գիտակազմակերպական գործունեության մասին (զեկուցողներ՝ ինստիտուտի տնօրեն Ռ.Հովհաննիսյան, ԳԱԱ թղթակից անդամ Ս.Մայրապետյան): Ծավալված մտքերի շահագրգիռ և սրտացավ քննարկումը ըստ էության տագնապ և անհանգստություն էր Սևանի, նրան սպառնացող վտանգի և ճակատագրի նկատմամբ: Ստորև ներկայացվող ՀՀ ԳԱԱ նախագահության ընդունած որոշումը լուրջ մտահոգություն է Սևանա լճի, նրա ջրահավաք ավազանի տագնապալի վիճակի և Սևանի փրկությանը միտված կոնկրետ քայլերի և անելիքների մասին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հավանություն տալով Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտական, գիտակազմակերպական գործունեությանը, միաժամանակ հանձնարարեց.

– Կազմակերպել Սևանի լիմնոհամակարգի հիդրոլոգիական, հիդրոֆիզիկական, հիդրոքիմիական և հիդրոկենսաբանական չափանիշների կանոնավոր ստացիոնար մոնիտորինգային արդյունքների վերլուծության և ինֆորմացիայի հաղորդման կենտրոն՝ հիդրոհամակարգերի էվտրոֆացման և աղտոտման մեխանիզմները բացահայտելու, կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները կանխագուշակելու և կանխելու նպատակով:

– Ստորերկրյա և մակերևույթային ջրերից կենսածին տարրերի, տոքսիկ և աղտոտող այլ նյութերի կենսաբանական ֆիլտրացիային և գերխոնավ կենսաերկրացենոզներին յուրահատուկ ֆաունայի և ֆլորայի վերականգնման նպատակով ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հետ համատեղ մշակել Սևանա լճի և նրա մեջ թափվող գետերի ափերի ողջ երկարությամբ (առնվազն 100 – 200մ լայնությամբ) սանիտարա-ջրապահպանական անտառային գոտի ստեղծելու միջոցառումների ծրագիր:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը միաժամանակ դիմեց ՀՀ կառավարությանը՝ հետևյալ առաջարկներով.

– Հաշվի առնելով Սևանա լճի կարևորությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում, կարևորելով լճի կանոնավոր գիտական հետազոտությունների անհրաժեշտությունը և Սևանի հիմնախնդրի վրա ուշադրություն կենտրոնացնելու նպատակով, ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը վերանվանել *ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի հիդրոէկոլոգիական պրոբլեմների ինստիտուտ»-ի:*

– Սևանա լճում գիտական հետազոտությունները ժամանակին կատարելու և կանոնավոր մոնիտորինգային վերահսկողություն իրականացնելու համար 2003թ. ինստիտուտին հատկացնել նպատակային, ինչպես նաև բազային ֆինանսավորում:

– Առաջնահերթ համարել Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղացումը և նշված քաղաքների ելքում ժամանակակից մաքրման համալիրների շինարարությունը՝ նախնական, կենսաբանական և քիմիական ենթահամակարգերով: Իրականացնել մաքրման համալիրների ելքաջրերի բնական կրկնամաքրում արհեստական (արբանյակ) ջրամբարներում կամ լճակներում, որից հետո միայն այդ ջրերը թափել գետերը կամ էլ օգտագործել ավազանի ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում, ի հաշիվ լճից կամ գետից վերցվող ջրաքանակի:

– Գյուղատնտեսական, էներգետիկ և այլ նպատակներով Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի բնական ռեսուրսների (հատկապես ջրային և ձկնային) օգտագործումից առաջացած եկամուտները հատուկ հաշվեհամարով նպատակաուղղել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, բնական ռեսուրսների պահպանման, վերարտադրման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների իրականացման համար:

– Սևանա լճից ոռոգման համար ջրառը պակասեցնելու նպատակով հանրապետությունում իրականացնել շուրջ 2,5մլրդ. խորանարդ մետր ընդհանուր ծավալով, նոր և արդեն սկսած ջրատնտեսական օբյեկտների և փոքր ջրամբարների կառուցման ու ավարտման շինարարական աշխատանքներ:

– Մարզում իրականացնել ոռոգման ցանցի վերակառուցում և մշակել ոռոգման արդյունավետ մեթոդներ, որոնք կբացառեն Սևանի ավազանի հողերի էռոզիան: Հնարավորին չափ բարձրացնել ոռոգման օգտակար գործողության գործակիցը:

– Վերանայել Սևանա լճի, Կեչուտ և Սպանդարյան ջրամբարների, Արփա և Որոտան գետերի ավազաններում հանքային պարարտանյութերի օգտագործման տեխնոլոգիան և առաջնություն տալ պարարտանյութերի այն տեսակներին, որոնք բնութագրվում են ելքի մեծությունների և լուծելիության ամենացածր գործակիցներով: Հնարավորինս սահմանափակել պարարտանյութերի օգտագործումը Սևանա լճի ավազանում:

– Մշակել և ներդնել հողապաշտպան ցանքատարածություններ, ըստ ավազանի էկոլոգո-էկոնոմիկական և տնտեսական շրջանների: Ստեղծել հակաէռոզիոն և հակասողանքային անտառաշերտերի համակարգ:

– Սևանի ողջ ավազանում մանր եղջերավոր անասունների գերծանրաբեռնվածության և բնական կերային հանդակների ոչ նպատակային օգտագործման հետևանքով առաջացած հողային էռոզիան կանխելու համար անցկացնել խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակի հարաբերության գիտականորեն հիմնավորված վերակառուցում:

– Հանձնարարել ՀՀ Բնապահպանության նախարարությանը կատարել Սևանա լճի արդյունագործական ձկնատեսակների և խեցգետնի պաշարների գնահատում և լճից հիդրոբիոնտների արդյունահանումը իրականացնել միայն գիտական հիմնավորմամբ:

– Սևանա լճի ձկնային պաշարների վերականգնման նպատակով վերանայել ձկնաբուծարանների հնարավորությունները և ստեղծել տնտեսական մեխանիզմներ՝ նրանց նպատակային գործունեությունն ապահովելու համար:

– Պետական և մասնավոր գյուղատնտեսական հողահանդակների ոռոգումն ու ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում տեխնիկական ջրամատակարարումն իրականացնել անմիջապես լճից՝ խստորեն արգելելով այդ նպատակներով օգտագործել հիմնական ձվադրավայր հանդիսացող գետերն ու նրանց աղբյուրները:

– Ձվադրավայր հանդիսացող գետերի վրա, ինչպես նաև լճում ձկների ձվադրման տեղերին մոտ բացառել հիդրոտեխնիկական կառույցների և այլ օբյեկտների կառուցումը՝ բացառությամբ բնապահպանական կառույցների, որոնք ունեն անհրաժեշտ էկոլոգիական հիմնավորումներ:

– Արգելել գետերի հուների առանձին հատվածների փոփոխումը, որը հանգեցնում է գետի ջրի հոսքի արագության մեծացմանը՝ հեղեղելով ձկնկիթը, հիդրոբիոնտներին և մանրաձկներին:

– ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը՝ ապահովել կառավարության 1999թ. ապրիլի 22-ի հ.261 որոշման 8-րդ կետի կատարումը, որը պարտավորեցնում էր ՀՀ կրթության և գիտության նախարարությանը և ՀՀ ԳԱԱ-ին ֆինանսավորել 1999 – 2000թթ. նախատեսված *«Սևանա լճի և դրա մեջ թափվող գետերի էկոլոգիական վիճակի գնահատման ու դրանց ջրերի որակի բարելավման միջոցառումների, էկոլոգիական փոփոխությունների կանխատեսման մեթոդների մշակում» և «Սևանա լճի ձկնային համակարգի էկոլոգա-կենսաբանական փոփոխությունների օրինաչափությունների բացահայտում» ուսումնասիրությունների համար:*

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

THE ARMENIAN GENOCIDE
ARMENOCIDE

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտն անգլերենով հրատարակել է ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանությունը. Հայասպանություն» (The Armenian Genocide. Armenocide) արժեքավոր աշխատությունը, որը նոր խոսք է այդ բնագավառում: Առաջին անգամ հայոց պետականության գոյության ժամանակաշրջանում՝ 1918 – 2002թթ., Հայաստանում օտար լեզվով հրատարակվում է ուսումնասիրություն՝ նվիրված մեր պատմության ամենաեղերական ժամանակահատվածին: Տարօրինակ է, բայց փաստ է: Նման աշխատության պահանջը վաղուց էր հասունացել: Վաղուց անհրաժեշտություն կար օտար ընթերցողին ներկայացնել հայոց ցեղասպանությանը նվիրված մի ուսումնասիրություն, որը գիտական անաչառությամբ և տարալեզու սկզբնաղբյուրների հիման վրա պարզաբաներ այդ հիմնահարցը, հայոց ցեղասպանության պատճառները, այն իրագործած երիտթուրքական ղեկավարության նպատակները և դրա հետևանքները ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ համայն մարդկության համար: Պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանի մենագրությունը գալիս է լրացնելու այդ բացը, և այն, անկասկած, իր կարևոր դերը կկատարի թուրքական իշխանությունների և նրանց քաղաքականությունը պաշտպանող պատմաբանների կողմից հայոց ցեղասպանության հարցերը աղավաղելու և կեղծելու սնանկությունը բացահայտելու գործում:

Ուսումնասիրությունը գրված է ոչ ավանդական մեթոդով: Այն շարադրված է գիտական նոր ուղղության՝ ցեղասպանագիտության, հայեցակարգի շրջանակներում և նրա հիմնադրույթների լույսի ներքո, որը նոր հնարավորություններ է ընձեռում հետազոտողին և նոր հեռանկարներ բացում հայոց ցեղասպանության խորքային ուսումնասիրության առջև: Դա Ն.Հովհաննիսյանի աշխատության կարևոր առանձնահատկություններից մեկն է:

Մյուս ուշագրավ առանձնահատկությունն այն է, որ հեղինակը XIX դարի վերջերի – XX դարի սկզբների Օսմանյան կայսրությունը համարելով ցեղասպան պետություն, հայոց ցեղասպանության հարցերը դիտարկում է «ցեղասպան պետության» հայեցակարգի տեսանկյունից:

Սույն աշխատության կարևոր նորամուծություններից է համեմատական զուգահեռների անցկացումը հայոց ցեղասպանության և հրեական հոլոկոստի՝ ողջակիզման, միջև, և Հայասպանություն՝ «Արմենոցիդ», եզրի հիմնավորումը և լայնորեն շրջանառության մեջ դնելը:

Աշխատությունը խմբագրել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Բ.Բարխուդարյանը:

Աշխատությունը հրատարակչական բարձր որակով և հիմնախնդրին վայել զուսպ ձևավորումով իրականացրել է «Զանգակ-97» հրատարակչությունը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԸ՝ ԲԱՑԱՌԻԿ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Քեզ, ռուսական մտքի հսկա,
Մեր սրտերն ենք նվիրում քեզ,
Դու, հիրավի բարի հանճար,
Եվ, անտարակույս՝ մարգարե՝...»
Ա.ԱՐՇՐՈՒՆԻ

1999 թվականին Մոսկվայում լույս տեսավ «Ա.Ս.Գրիբոյեդովը որպես պատմության և մշակույթի երևույթ» գիրքը: Ամենևին ոչ պատահաբար գիրքը հրապարակ եկավ այն օրերին, երբ լրանում էր Պարսկաստանում ռուս մեծ դիվանագետի, պոետի և կոմպոզիտորի գազանային սպանության 170 տարին: Գրքում բավական շատ են գրական հայտնությունները, որոնք հետաքրքիր են ընթերցող լայն շրջանակների և գրականագետների համար: Այսպես, օրինակ, գրքում առաջին անգամ տպագրվել է անհայտ գեղանկարչի կողմից արված Գրիբոյեդովի դիմանկարը (Ն.Ի.Ուտկինի բնօրինակից): Դիմանկարի տակ կա նկարչի ձեռքով գրված մակագրություն. «Ծնվել է 1792թ., սպանված է 1829թ.):

Այս մակագրությունը մեզ իրավունք է տալիս վերանայելու Ա.Ս. Գրիբոյեդովի ծննդյան թվականը: Մինչ այդ ընդունված էր, որ Գրիբոյեդեվը ծնվել է 1896 թվականին, որը, մեր համոզմամբ, սխալ էր: Եվ եթե մենք վերանայում ենք այդ թիվը, այսինքն՝ ընդունում ենք 1792 թվականը, բնական ու հասկանալի է դառնում Գրիբոյեդովի Մոսկվայի համալսարան ընդունվելու տարիքը. ոչ թե 11 տարեկանում, ինչպես ներկայացվում էր մինչև օրս, այլ 14 տարեկանում (հունվար, 1806թ.): Այս ճշտումը բացատրում է նաև նրա կյանքի կարևոր իրադարձությունների մյուս կարևոր թվականները: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ սույն ճշտումով նրա կյանքի տևողությունը դառնում է ճակատագրական 37 տարի: Սա զարմանալիորեն համընկնում է Ա.Ս.Պուշկինի ապրած տարիների հետ (37 տ.): Մի բան, որ ստիպում է մտածել Ռուսաստանի երկու մեծ զավակների ճակատագրերի կանխորոշված լինելու մասին:

Նկատի առնելով Ա.Ս.Գրիբոյեդովի ծննդյան ճշտված թվականը (1792թ.), մենք հնարավորություն ունենք այս տարի արժանին մատուցել Գրիբոյեդովի հիշատակին, նշել 210-ամյակը այն մարդու, որ հանուն մարդասիրական գաղափարների գիտակցաբար զոհեց իր կյանքը:

Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Գրիբոյեդովը զարմանալի օժտված անհատականություն էր. լայն հասարակությանը նա հայտնի է որպես պոետ՝ հանճարեղ «Խելքից պատուհաս» չափածո կատակերգության հեղինակ: Գրականագիտական առումով չափազանց ճիշտ է բնութագրված՝ հանճարեղ: Դա Գրիբոյեդովի ստեղծագործության ճշմարիտ բնութագիրն է: Գրիբոյեդովի ստեղծագործության ֆրանսիացի հետազոտող Ժ.Բոնամուրի կարծիքով, «Խելքից պատուհաս» կատակերգությունը «ընթերցող լայն շրջանների մեջ ունեցած հաջողությամբ իր տեսակի մեջ բացառիկ է»:

Բավական է նշել, որ արդեն 1831 թվականին, ինչպես վկայում է Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձու Կ. Բորոդինը, Ռուսաստանով մեկ տարածված էին Գրիբոյեդովի ստեղծագործությունների 40 հազար ձեռագրեր:

Սակայն Գրիբոյեդովը ոչ միայն տաղանդավոր պոետ էր ու դիվանագետ, այլև երաժիշտ ու՝ կատարող, կոմպոզիտոր, էզոթերիկ (գաղտնի, ծածուկ) ուսմունքների նուրբ և խորը գիտակ: Ամենայն հավանականությամբ հենց աստղագուշակության և արևելյան գաղտնի ուսմունքների իմացությունը օգնեցին նրան պատրաստելու «Թուրքմենչայի խաղաղության պայմանագիրը» Ռուսաստանի և Պարսկաստանի միջև, որը ստորագրվեց 1828 թվականի փետրվարի 13-ի ճիշտ կեսգիշերին: Այդ ժամը պարսիկ աստղագուշակների կողմից դիտվել էր որպես ամենաբարենպաստ ժամանակը պայմանագրի հաստատուն լինելու համար: Եվ, իսկապես, պայմանագրի ստորագրումից անցել է ավելի քան 170 տարի, և Ռուսաստանն ու Պարսկաստանը այդ ընթացքում երբեք չեն պատերազմել:

Եվ հենց սրանում է դրսևորվել Գրիբոյեդովյան հանճարը, մարգարեի հանճարը, որ կանխագուշակում էր գալիքը:

Պետք է ընդգծել, որ հենց Թուրքմենչայի պայմանագիրը դարձավ հայկական երկու պետական ինքնավար կազմավորումների վերածննդի հիմքը՝ հանձինս Երևանի և Նախիջևանի նահանգների: Այդ երկու նահանգները տարածքային առումով գերազանցում են այսօրվա Հայկական Հանրապետության տարածքը: Ուրեմն և կարող ենք արձանագրել, որ 14 – 15 դարերի սահմանագծում կորցրած հայկական պետականության վերականգնումը, անտարակույս, կապված է նաև Ալեքսանդր Գրիբոյեդովի անձի հետ: Մի հանգամանք, որ այդ անունը անմոռաց է դարձնում հայ ժողովրդի երախտագետ հիշողության մեջ:

Գրիբոյեդովի մարգարեական հանճարը «Խելքից պատուհասում» կանխագուշակեց նաև կայսեր կողմից ռուս նշանավոր փիլիսոփա Չաադաևին (Չացկու նախատիպը) խելագար հորջորջելու մեղադրանքը: Հիրավի, «Խելքից պատուհասը» կատակերգություն չէ, այլ բլոր ժամանակների և ժողովուրդների դրաման, երբ մարդկանց ճշմարտության լույս բերող հանճարներին հռչակում են խելագարներ, ծանակում են ու հալածում:

Գրիբոյեդովի բազմակողմանի և փայլուն գիտելիքները զարմացնում էին անգամ նրա նշանավոր ժամանակակիցներին: Պուշկինի վկայությամբ «միայն մի քանի մոտիկներ գիտեին նրա (Գրիբոյեդովի) արժեքը, և նրանք էին միայն նկատում մյուսների թերահավատ, ապուշ և քստմնելի ժպիտը, երբ առիթ էր լինում խոսել Գրիբոյեդով՝ արտասովոր մարդու մասին»: Գրիբոյեդովին իմացող ժամանակակիցները հարազատի պես էին վերաբերվում նրան: Բոլորն էլ միակամ էին այն հարցում, որ իրենց մտերիմը չափազանց սուր մտքի և հնարավորությունների տեր անհատականություն է: Հետագայում Պուշկինը պետք է ասեր. «Ինչքան ափսոս է, որ Գրիբոյեդովը չթողեց իր գրառումները: Նրա կենսագրությունը վիճակված էր գրել նրա ընկերներին, սակայն նշանավոր մարդիկ մեզ մոտ անհետանում են՝ իրենց մասին չթողնելով ոչ մի հետք»:

Իհարկե, այսօր, Ա.Ս. Գրիբոյեդովի մահվանից 170 տարի անց, մենք նրա մասին ավելի շատ գիտենք, քան նրա ժամանակակիցները, սակայն հետաքրքրությունը այդ բացառիկ անհատականության՝ որպես մարդկության պատմության և մշակույթի երևույթի, գնալով աճում է: Դրա վկայությունն է նաև վերջերս հրապարակ իջած Արտեմիսի «Մեծ հումանիստը» 4 գործողությամբ դրաման: Ստեղծագործության մեջ ընդգրկված են Ալեքսանդր Գրիբոյեդովի և նրա կնոջ՝ Նինայի (վրաց նշանավոր պոետ և գրող Ալեքսանդր Ճավճավաձեի դստեր) վերջին ամիսների համատեղ կյանքի իրադարձությունները: Նինայի հուշերից մենք պետք է տեղեկանանք, որ Գրիբոյեդովը ինչ-որ առիթով ասել է. «Ով ոտնձգություն կանի ռուսական հողերի նկատմամբ, նա իրեն կարժանացնի Նապոլեոնի բախտին»: Սա նույնպես Գրիբոյեդովի մարգարեությունն է, որ ապացուցվել է Ռուսաստանի պատմությամբ:

Վերը նշված պիեսում մեծ խորությամբ տրված են Գրիբոյեդովի ապրումները, որը նախապես գիտեր, որ Պարսկաստանից ողջ չի վերադառնա: Այդ մասին նա ասել էր Պուշկինին հրաժեշտ տալիս և երկու անգամ՝ իր տասնվեցամյա կնոջը, երբ ճանապարհվում էր Պարսկաստան: Ըստ որում, նա թախանձագին խնդրել է Նինային՝ իր մահից հետո իր դաշույնը նվիրել արժանավոր մի անձնավորության և ամուսնանալ նրա հետ: Գրիբոյեդովի մեծ և գիտակցված զոհաբերության թեման արծաթե թելի պես անցնում է ամբողջ դրամայով: Պիեսում շատ հետաքրքիր է ներկայացված ժամանակի նշանավոր մարդկանց ճակատագրերի խաչաձևումը: Բավական համոզիչ է սյուժետային այն գիծը, երբ Գրիբոյեդովի նահատակվելուց հետո երևան է գալիս Մ.Յու. Լերմոնտովի Նինա Ճավճավաձեի նկատմամբ տածած սիրո դրաման: Կա վարկած, որ Լերմոնտովը Նինային սիրահարված է եղել դեռ 10 տարեկանից: Այրիանալուց 7 տարի հետո Լերմոնտովը ամուսնության առաջարկ է անում Նինային: Նինան մերժում է, սակայն կատարելով ամուսնու կամքը (արժանավայել անձնավորության նվիրել իր դաշույնը), Գրիբոյեդովի դաշույնը նվիրում է Լերմոնտովին: Նինան քաջ գիտեր, որ դառնալ Լերմոնտովի կինը պատիվ է յուրաքանչյուր աշխարհիկ տիկնոջ համար: Սակայն հրաժարվում է այդ բախտից՝ հավատարիմ մնալով իր մեծ ամուսնու հիշատակին՝ մինչև իր կարճառտև կյանքի վերջը:

Դրամայում բացահայտվում է ևս մի գաղտնիք, որ անորոշ էր մինչև վերջերս: Պարզվում է, Ալեքսանդր Գրիբոյեդովը, Յուրի Լերմոնտովը և Նինա Ճավճավաձեն ազգակցական կապ են ունեցել միմյանց հետ:

Նինայի կերպարը որոշակի տեղ ունի Լերմոնտովի ստեղծագործության մեջ: Սակայն Լերմոնտովը միշտ խնամքով թաքցրել է իր զգացումները, որովհետև այդ հարցում անկարող էր մրցակցել մեծն Գրիբոյեդովի հետ: Այսպես, օրինակ, 1829 թվականին Լերմոնտովը թարգմանում է Շիլլերի «Էմմային» բնաստեղծությունը, սակայն այն վերնագրում է «Նինային»: Բանաստեղծությունը բողոք է բախտից՝ սիրած էակին կորցնելու համար: Ամենայն հավանականությամբ Շիլլերի «Էմմային» բանաստեղծությունը համահունչ էր Լերմոնտովի սիրային տվայտանքներին (Նինայի ամուսնությունը Ալեքսանդր Գրիբոյեդովի հետ):

Ընդունելով Նինայի ընծայած դաշույնը, Լերմոնտովը պատասխանում է «Դաշույն» հայտնի բանաստեղծությամբ: Գրիբոյեդովի դաշույնի դաստակին եղել է մակագրություն. «Ամուր եղի՛ր հոգով»: Հիմքեր կան պնդելու, որ Լերմոնտովի հոգեկան ապրումները՝ կապված Նինայի նկատմամբ տածած սիրո հետ, իրենց արտահայտությունն են գտել նաև Լերմոնտովի հասուն շրջանի լիրիկայում: հուսանք, որ Նինա Ճավճավաձե – Միխայիլ Լերմոնտով թեման դեռ կգտնի իր հետազոտողին:

Վերադառնալով Ալեքսանդր Գրիբոյեդովին, պետք է նշել, որ մեծանուն մտածողը իր ստեղծագործության մեջ արտահայտել է համաշխարհային մշակույթի լավագույն նվաճումները՝ ընդհուպ մինչև երաժշտությունը, գեղանկարչությունը, թատրոնը: Ունենալով բացառիկ հիշողություն, կատարելապես տիրապետելով եվրոպական և արևելյան մի շարք լեզուների, գրողը անպարփակ իմացություններ ուներ Արևմուտքի և Արևելքի գրականությունների, ինչպես նաև անտիկ արվեստի բնագավառներում: Այն բոլոր լավն ու առաջավորը, որ նա գտնում էր համաշխարհային և ազգային մշակույթների ոլորտում, ընդունում էր իր ստեղծագործական զինանոցը և օգտագործում՝ կատարելագործելու իր վարպետությունը:

Ալեքսանդր Սերգեևիչ Գրիբոյեդովը հեռացավ կյանքից՝ չսպառած իր փայլուն միտքը և վիթխարի տաղանդը: Նա երազում էր ողջ կյանքը նվիրել պոեզիային, երաժշտությանը, թատրոնին, արվեստին ընդհանրապես, սակայն որպես պետական այր, հարկադրված եղավ մնալ պետական ծառայության մեջ և նահատակվեց սև ամբոխի ձեռքով:

Ա.Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու
Մոսկվա

ՆՈՐԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Միավորված ազգերի կազմակերպությունը իր պաշտոնական սայտում Լեռնային Ղարաբաղը ճանաչել է Հայաստանի մաս: Ինչպես հաղորդում է ադրբեջանական AHC հեռուստաալիքը, այդ սայտի «Մարդու իրավունքների պաշտպանությունը» բաժնում Լեռնային Ղարաբաղը բնութագրվում է որպես Հայաստանի Հանրապետության մաս: Պաշտոնական Բաքուն հույս է հայտնել, որ կատարվածը ընդամենը ՄԱԿ-ի սայտի օպերատորների տեխնիկական սխալն է:

ԱՆՀԵՌԱՏԵՍ ՈՐՈՇՈՒՄ

Կրասնոդարի երկրամասի օրենսդրական ժողովը ընդունեց նահանգապետ Ալեքսանդր Տկաչովի խոստացած «Միգրացիոն վերահսկողությունը ուժեղացնելու մասին» օրենքը: Այդ օրենքի համաձայն միլիցիայի առջև խնդիր է դրված ստեղծել «արտաքսող» հենակետեր և արտաքսման ենթակաների ուղեկցային ծառայություն: Միավորված Ազգերի Կազմակերպության փախստականների գծով Գերագույն կոմիսարի հանձնախումբը և շատ ուրիշ միջազգային ու տեղական իրավապաշտպան կազմակերպություններ Կրասնոդարի երկրամասի իշխանությունների կողմից ծրագրվող բռնամիջոցները խստագույնս դատապարտել են՝ որակելով այն որպես «մարդու իրավունքների ոտնահարում»: Արդյոք Ռուսաստանյան Դաշնության նահանգապետը իրեն այդ քայլով չի կրկնում պատմությանը հայտնի այն գործիչներին, ովքեր զբաղվում էին «ռասսայի մաքրության» հարցերով: Թե նա չգիտի, որ մեր և մյուս հանրապետություններից բնակչության արտագաղթի հիմնական պատճառը "сплотила на веки великая русь"-ն էր, որը 1917 – 20 թվականներին մեզ թողեց մենակ գիշատիչ Թուրքիայի դեմ հանդիման, հիմա էլ սևծովյան տարածքներն են մաքրում հայերից: Թե պարոն նահանգապետը և նրան սույն որոշումը հուշողները չգիտեն, որ Կուբանի, Կրասնոդարի, Ստավրոպոլի տարածքների զարգացմանը մեծապես նպաստել են նույն հայերը, որոնք երկու հարյուրամյակ է ապրում են այդ տարածքներում և իրենց քրտինքը խառնելով ռուս եղբայրների քրտինքին, շենացրել են հողը, այն հողը, որ ներկված է նաև հայերի արյունով: Եթե պարոն նահանգապետը չգիտի պատմության անցուդարձերը և հայերի նկատմամբ ընդունում է նման անհեռատես որոշում, դեռ ուշ չէ, կարող է պատմության դասեր առնել իր տարածքում ապրող ռուս և հայ բնակչությունից: Ժողովուրդը պատմությունը չի մոռանում:

* * *

Դոնոր երկրները ՄԱԿ-ի միջազգային կոնֆերանսում հայտարարել են աղքատ երկրներին ցույց տրվող օգնությունը մեծացնելու մասին՝ այդ օգնությունը ավելի նպատակային և արդյունավետ օգտագործելու պայմանով: Ինչպես մեկնաբանել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վարդան Խաչատրյանը, ԱՄՆ-ը պատրաստ է առաջիկա երեք տարում «Աղքատության դեմ պայքարի» ծրագրին հատկացնել 10 միլիարդ դոլար, իսկ Եվրամիությունը՝ 20 միլիարդ դոլար (մինչև 2006 թվականը):

Չմոռանանք փաստել, որ Հայաստանի ազգաբնակչության 55 տոկոսը գտնվում է աղքատության սահմանագծից այն կողմ:

Սխալ կլինի ասել, թե Հռոմում անտիկ շրջանի հուշարձաններ շատ կան, քանզի ինքը՝ քաղաքը մի ամբողջական հուշարձան է ու այդ հուշարձանների մեջ աչքի է ընկնում այս մեկը՝ քաղաքի հին ջրմուղ-ջրատարը: Այն հիացմունք է պատճառում ոչ միայն ջրի մաքրությամբ, այլև ահա այս հին հուշարձաններով: Եվ քանզի քաղաքն, իրոք, հնի ու նորի մի միասնական հուշարձան է, ամեն մարդ ցանկանում է այն տեսնել նորից ու նորից: Դրա համար մեծ ծախսեր «պետք չեն»: Բավական է մեկ անգամ այցելելիս մետաղադրամ նետես այս շատրվաններից գոյացած ջրավազանը ու դու «անպայման նորից կայցելես» Հռոմ: Իսկ դա հրաշալի է...

Լուսանկարը՝ «ԳԻՏՈՒԹՅԱՆ»

Սադագասկարի բնակչության հիմնական զբաղմունքը ձկնորսությունն է ու փոքր առևտուրը: Կղզու տաք ծովափերը և կարմրավուն գետերը հարուստ են ձկներով, իսկ ճամփեզրերն ու հրապարակները պարզապես շուկաներ են, որտեղ վաճառվում է ամեն ինչ: Երկրի միակ երկաթուղու ամբողջ երկարությամբ նույնպես շուկա է, մանրա-պտղա-բանջարավաճառների շուկա:

ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

ԵՎՍ ՄԻ ՎԱՐԿԱԾ ՔԵՆԵԴՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եվ այսպես, օդային աղետի զոհ դարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգների 35-րդ պրեզիդենտ, 1963-ին դավադրության զոհ դարձած Ջոն Ֆիցջերալդ Քենեդու 38-ամյա որդին՝ կրտսեր Ջոն Քենեդին: Նրա հետ զոհվեցին կինը և քույրը: Ջոն Քենեդուն վիճակված էր դառնալու ԱՄՆ-ի մեծագույն պրեզիդենտներից մեկը և նա ուներ բոլոր արժանիքները այդպիսին լինելու համար: Սակայն ինչ-որ ուժերի համար անցանկալի և անընդունելի էր նրա պահվածքը, և նա սպանվեց: Այսօր արդեն Ջոն Քենեդու ընտանիքից այլևս ոչ ոք չկա:

Պատմությունն դարձավ Քենեդիների տոհմին պատուհասած մի ծանր ողբերգություն ևս. ի՞նչ է սա՝ ճակատագիր, թե խորհրդավոր ու անհայտ մի ուժ, որ ահա քանի տասնամյակ պատուհասել է այս ընտանիքին, և առեղծվածային հանգամանքներում, անբնական մահով կտրվում է նրա անդամների կյանքի թելը: Այս առեղծված-հանելուկը հասկանալու և բացատրելու բազում և բազում փորձեր են եղել:

Միացյալ Նահանգների պատմության մեջ ամենաերիտասարդ պրեզիդենտ Ջոն Ֆիցջերալդ Քենեդու սպանությունը մինչև օրս բացահայտված չէ: Եվ սա երևի զարմանալի չէ:

Առեղծվածային հանգամանքներում հանդերձյալ աշխարհ գնացին ոչ միայն զոհը՝ Միացյալ Նահանգների պատմության մեջ ամենաերիտասարդ պրեզիդենտ Ջոն Քենեդին, այլև մարդասպանը, հետո մարդասպանի մարդասպանը և բազում ուրիշ ականատեսներ ու վկաներ, որոնք կարող էին լույս սփռել այդ ողբերգության հանգամանքների վրա:

Անցած տասնամյակների ընթացքում բազմաթիվ վարկածներ են առաջ քաշվել Ջոն Քենեդու սպանության պատճառների ու շարժառիթների, դավադրության կազմակերպիչների և իրագործողների վերաբերյալ:

Այսօր արդեն շրջանառության մեջ է մի նոր վարկած, որն առաջին հայացքից թվում է ֆանտաստիկ ու պարզապես անհավանական: Այս վարկածի հեղինակ Ուիլյամ Կուպերը, որը չբացառելով մինչ այդ տարածված վարկածների հավանականությունը, գտնում է, թե Ջոն Քենեդու սպանության ամենակարևոր պատճառն այն է, որ պրեզիդենտը բացահայտել էր ԱՄՆ-ի կառավարող վերնախավի կապը այլմոլորակայինների հետ և պատրաստվում էր այդ մասին տեղյակ պահել ամերիկյան ժողովրդին:

Ուիլյամ Կուպերը գրում է.

«Էյզենհաուերը վերջին պրեզիդենտն էր, որ լրիվ տիրապետում էր այլմոլորակային եկվորների հետ կապված իրադրությանը: Նրան հաջորդած պրեզիդենտներին հաղորդվում էր միայն այն, ինչ հույժ գաղտնի «Մաժեստիկ-12» ծառայությունը և հետախուզությունը անհրաժեշտ էին համարում տեղեկացնել: Ըստ որում, հավատացեք ինձ, այդ տեղեկությունները, որ հաղորդվում էին պրեզիդենտին, երբեմն շատ-շատ հեռու էին ճշմարտությունից: «Մաժեստիկ – 12»-ը ամեն նոր պրեզիդենտի հրամցնում էր մի հեքիաթ այլմոլորակայինների կործանված քաղաքակրթության, եկվորների վերածնման ցանկության մասին, որոնք մեր մոլորակի վրա ուզում են կառուցել իրենց նոր տունը: Սրա դիմաց նրանք կհատուցեն բարձր տեխնոլոգիաներով: Եվ ամեն մի նոր պրեզիդենտ հավատում էր այս հեքիաթին»:

Ինչպես երևում է հավատացողներից մեկն էլ եղել է Ջոն Քենեդին: Սակայն իր բարձր պաշտոնի հնարավորության սահմաններում ծանոթանալով «Մաժեստիկ-12» խմբի գործունեության որոշ կողմերին, նա, Կուպերի կարծիքով, ինչ-որ չափով իր համար պարզեց ճշմարտությունը եկվորների մասին, ինչպես նաև այն, որ այլմոլորակայինների հետ իրականացվող նախագծերում կառավարող վերնախավը օգտագործում է նարկոբիզնեսից ստացված եկամուտներ: Կուպերը գտնում է, որ 1963-ին Ջոն Քենեդին վերջնագիր է հղել «Մաժեստիկ-12»-ի անդամներին թմրադեղերի բիզնեսին վերջ տալու պահանջով: Բացի այդ, Քենեդին հաղորդել է նրանց, որ մտադիր է մինչև տարեվերջ ամերիկացիներին տեղեկացնել երկրի վրա այլմոլորակային ներկայության մասին:

Կուպերի այս տեսակետին են նաև ուրիշ հայտնի մարդիկ: Այսպես, այլմոլորակային քաղաքակրթությունների հետ մարդկության շփումների մասին մի քանի գրքերի հեղինակ Բոբ Ֆրինելլը ուշադրություն է հրավիրում Կոլումբիական համալսարանում, իր ողբերգական մահից 10 օր առաջ Քենեդու արտասանած խոսքերի վրա: Ի դեպ, այդ խոսքերն այմ ժամանակ տարակուսանք հարուցեցին շատերի մեջ. «Պրեզիդենտական պաշտոնը օգտագործվել է դավադրություն նյութելու ամերիկյան ժողովրդի դեմ: Եվ ես մինչև այս պաշտոնը թողնելը, պարտավոր եմ Ամերիկայի քաղաքացիներին տեղեկացնել իրենց դրության մասին»:

Ի՞նչ էր ուզում ասել Ջոն Քենեդին իր երկրի քաղաքացիներին: Ամերիկացի պրոֆեսոր Լոուրենս Մերրիկը «Դեսպանի սպանությունը. Ջոն Քենեդու մահը» գրքում, որ լույս է տեսել 7 տարի առաջ, պնդում է, որ խորհրդակցելով ՉԹՕ-ների գծով լավատեղյակ, նախկին պրեզիդենտ Էյզենհաուերի և իր եղբոր՝ Ռոբերտ Քենեդու հետ, Ջ.Քենեդին որոշեց 1963 թվականի նոյեմբերի 22-ին անել սենսացիոն հայտարարություն:

Բնականաբար, պրեզիդենտի մտադրությունը ծայրաստիճան անհանգստություն առաջացրեց շահագրգիռ մարդկանց շրջանում: Եվ Դալլասում հնչած կրակոցները, թերևս, կանխեցին մարդկության պատմության մեջ ամենասենսացիոն պաշտոնական խոստովանությունը:

Ահա մի քանի քաղվածք այդ չկայացած ելույթից, որոնք Մերրիկը տպագրել է իր գրքում. «Իմ համաքաղաքացիներ, ամերիկացիներ... Երկիր մոլորակի քաղաքացիներ, մենք միայնակ չենք... Որպես պրեզիդենտ, ես վստահեցնում եմ ձեզ, որ այդ էակները չարիք չեն ցանկանում մեզ: Ընդհակառակը, նրանք խոստանում են մեզ հետ միասին դիմագրավել և հաղթանակ տանել մարդկության ընդհանուր թշնամիների՝ բռնակալների, աղքատության, հիվանդությունների և պատերազմների դեմ... նրանց հետ միասին մենք կարող ենք ստեղծել ավելի լավ աշխարհ...»:

Ի՞նչի վրա է հիմնված Կուպերի և նրա համախոհների սույն վարկածը: Նախ և առաջ մանրուք թվացող փաստերի, որոնք ոչ պրոֆեսիոնալին անգամ հուշում են դավադրության գոյությունը:

Այսպես, «պատահականորեն» ոստիկանության կողմից չէր պաշտպանվում այն շենքը, որտեղից կրակեց Լի Հարվի Օսվալդը: Հաշված ակնթարթների ընթացքում նա ուղղակի ֆիզիկապես անկարող էր նշանառու գնդակ արձակել մի քանի անգամ: Սիրողական կինոժապավենի կադրերը պարզ ցույց են տալիս, որ առնվազն մեկ գնդակ Քենեդու վրա արձակվել է ոչ թե ետևից, այլ դիմացից: Որոշ ժամանակ պահպանվող Քենեդու ուղեղը, որով կարելի էր հստակ որոշել, թե որ կողմից են արձակվել գնդակները, խորհրդավոր հանգամանքներում անհետացավ:

Տարակուսանք է հարուցում պրեզիդենտական ավտոմեքենայի վարորդի՝ հատուկ ծառայությունների բարձրակարգ աշխատակից Ուիլյամ Գրիիրի պահվածքը: Լսելով կրակոցները, ըստ հրահանգի, նա պետք է արագացներ մեքենայի ընթացքը: Մինչդեռ նա արգելակեց մեքենան՝ պրեզիդենտին և նրա ընտանիքին վերածելով գերազանց թիրախի: Շշմեցուցիչ է այն հանգամանքը, որ բոլոր նրանք, որոնք սպանության պահին ամենամոտն են կանգնած եղել մեքենային և տեսել ամեն ինչ, երկու տարվա ընթացքում, հանելուկային հանգամանքներում իրար ետևից զոհվեցին:

Նրանք, որոնք չէին հավատում գլխավոր դատավոր Օուրենի հանձնաժողովի եզրակացությանը, ձեռնարկեցին սեփական հետաքննություն: Նրանք եկան այն հետևության, որ դավադրությունը կազմակերպել է կենտրոնական հետախուզական վարչությունը: Իսկ երբ այս հրեշավոր հանցագործությունը՝ իրականացվեց, «մավրերը», որոնք կատարել էին իրենց սև գործը, պետք է լռեին: Եվ լռեցին՝ «ուղևորվելով» հանդերձյալ աշխարհ:

Նրանց թվում էր նաև պրեզիդենտական ավտոմեքենայի վարորդ և թիկնապահ Ուիլյամ Գրիիրը: Ռազմածովային հետախուզության նախկին բարձրաստիճան սպա Ուիլյամ Կուպերը համոզված էր, որ մահացու է եղել ոչ թե Օսվալդի արձակած գնդակը, այլ Քենեդու անձնական վարորդի և թիկնապահի կրակոցը: Սիրողական առնվազն երեք ժապավենում նկարահանված է այն պահը, երբ պրեզիդենտի վարորդ-թիկնապահ, գաղտնի ծառայությունների աշխատակից Ուիլյամ Գրիիրը ձախ ձեռքով, աջ ուսի վրայով, ԿՀՎ վարչությունում մշակված հատուկ ատրճանակով կրակում է Քենեդու գլխին:

Երկար ժամանակ Կուպերը այս փաստերը փորձում էր ներկայացնել լայն հասարակայնությանը, դասախոսություններ էր կարդում, ցուցադրում ժապավենները: Ինչ-որ մարդկանց սա դուր չէր գալիս, և դասախոսություններից մեկի ժամանակ նրա վրա մահափորձ կատարվեց: Միայն երջանիկ պատահականությամբ նա կենդանի մնաց, բայց... զրկվեց ոտքից:

Որքանո՞վ է կարելի հավատալ Կուպերի լավատեղյակությանը:

Ուիլյամ Կուպերը եղել է ԱՄՆ-ի ռազմածովային հետախուզության բարձրաստիճան սպա: Կա այն կարծիքը, որ հենց ռազմածովային նավատորմի ղեկավարությունն է իրականացրել այն ստորերկրյա բազաների շինարարությունը, որոնք նախատեսված էին այլմոլորակայինների հետ համատեղ օգտագործման համար: Թոշակի գնալուց հետո Կուպերը իրեն նվիրեց ՉԹՕ-ների առեղծվածի հետաքննության և իշխանությունների կողմից չճանաչված թռչող օբյեկտների գոյությունը թաքցնելու փաստի մերկացմանը:

Ծառայության բերումով նա որոշ ժամանակ գլխավոր հրամանատարությանը տեղեկատվություն է հաղորդել ՉԹՕ-ների վերաբերյալ, իսկ 1972-ին, երբ ծովակալ Ա.Կլարկի հետախուզական խմբում էր, ծանոթացել էր կառավարական երկու հաշվետվությունների հետ, որոնք վերաբերում էին այլմոլորակային եկվորներին: Հույժ գաղտնի այդ հաշվետվություններից մեկում տեքստային ինֆորմացիայից բացի կային սև-սպիտակ 25 լուսանկարներ, որոնք պատկերում էին այլմոլորակային կյանքի տարբեր ձևեր: Որպեսզի ավելի համոզվենք Կուպերի լավատեղյակության մեջ, ավելացնենք, որ «Փոթորիկ անապատում» օպերացիայից մեկ տարի առաջ տրված հարցազրույցում նա կոնկրետ ասել էր Իրաքի վրա հարձակվելու ստույգ օրը: Իսկ այդ ինֆորմացիան նա քաղել էր ամերիկյան հետախուզության գաղտնի նյութերից, որոնք անցել էին նաև նրա ձեռքով: Կուպերի վարկածի կողմնակի ապացույց են պաշտոնաթող գնդապետ Ֆիլիպ Կորսոի վերջերս կատարած սենսացիոն խոստովանությունները: Աղմուկ համած «Ռոզուելլից մեկ օր անց» գրքում տեխնիկական հետախուզության նախկին բաժնի պետը խոստովանում է, որ ինքը մասնակցել է Ֆորտ Ռայլում (Կանզասի նահանգ) 1947թ. վթարի ենթարկված «ափսեի» «օդաչուի» դիակի զննմանը: Կորսոն պատմում է նաև, որ ինքը հնարավորություն է ունեցել մոտիկից ուսումնասիրել տարբեր ՉԹՕ-ների բեկորներ՝ հատուկ ամրության մետաղի կտոր, համակարգչային այրված չիպ, ինտեգրալ սխեմաներով թիթեղներ, լազեր հիշեցնող սարք, թափանցիկ ապակենման կաբելներ, հատուկ օպտիկայի մասեր: Կորսոյի կարծիքով ՉԹՕ-ների Ռոզուելյան և ուրիշ վթարներից ստացված տեղեկությունները շատ բանով որոշել են ամերիկյան գիտատեխնիկական որոնումների ուղղությունները, մասնավորապես համակարգչային, լազերային և ուրիշ տեխնոլոգիաների բնագավառներում: Երբ 1998թ. մարտի 25-ին Ֆենիքսի օկրուգային դատարանում քննվում էր ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության կողմից ՉԹՕ-ների մասին կարևորագույն ինֆորմացիան հասարակությունից թաքցնելու գործը, գնդապետ Կորսոն երդման տակ հաստատեց իր գրքում շարադրված փաստերը: (Ի դեպ, մեր թերթը ժամանակին տպագրել է նյութեր Ռոզուելլում վթարի ենթարկված «թռչող ափսեի» և զոհված այլմոլորակայինների մասին):

(Շարունակելի)



Ռեպլիկ.

ԱՍՏՂԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐԻՆ

Ու թեև արվեստի, գիտության բնագավառներում աստղերն էլ համայն մարդկությանն են պատկանում, բայց խոսքը ուղղակի իմաստով աստղերի մասին է: Ո՞ր ընթերցողը չէր ուզի թերթում կարդալ տիեզերքի, այլ գալակտիկաների, ինչ իմանաս՝ գուցե նաև այլ քաղաքակրթությունների մասին: Իզո՞ւր են մեր հայացքները լույսը բացվելուն պես հառած դեպի երկինքը:

Եվ, այսպես, որոշեցինք անդրադառնալ աստղերին: ԱՊՀ երկրների, Մերձավոր Արևելքի ժողովուրդները կնախանձեն մեզ՝ հայերիս. չէ՞ որ թեև փոքր ենք ու թույլ զարգացած, թեև քաղցած ենք ու ժողովրդի մեծ մասը՝ պանդուխտ, բայց մենք, միայն մենք ունենք Բյուրական, որ բյուր ակնով դեպի երկինք է հառել հայոց միտքը՝ այնտեղից երկիր բերելով մինչ այժմ մեզ անհայտ տեղեկատվություն:

Սիա այս գնահատականներով էլ սկսեցի ու ցանկացա վերջացնել Բյուրականի աստղադիտարանի մասին հաղորդագրությունը, երբ աշխատասենյակիս գործընկեր-հարևանս ինձ հուշեց.

– Բայց այդպես էլ մեզ չգրեցին իրենց աստղերի մասին...

Սթափվեցի: Հիշեցի, որ 2002 թվականի հունվարի 27-ից պայմանավորվում եմ Բյուրականի տնօրենի հետ՝ ընթացիկ գործերի, դիտարկումների մասին հոդված գրել... Չի ստացվում. «մեկ շաբաթ հետո... այս երկուշաբթի անպայման... մեր հարցը լսելու են բաժանմունքում, դրանից հետո անմիջապես», խոստումներից հետո՝ գործը տեղից չի շարժվում: Ես աստղագետ չեմ ու հավանական է չհասկացա, որ բյուրականցիների լեզվով մեկ շաբաթ, մեկ ամիս, մեկ օր հասկացությունները երկրային չեն, այլ տիեզերական են, հետևապես խոստացված հոդվածը կարող է խմբագրությանը տրամադրվել հազար կամ գուցե ավել լուսային տարի հետո: է, կդիմանա՞նք այդքան...

Չգիտեմ, գիտեմ միայն, որ 1000 ու 10.000 տարի հետո էլ Բյուրականի տնօրենի հեռախոսի ընկալուչում հնչելու է իմ ձայնը.

– Պարոն տնօրեն, դուք խոսք եք տվել մեզ հոդված գրել, ե՞րբ եք կատարելու ձեր խոստումը, քանի՞ ամիս սպասենք...

Այնպես որ, սիրելի ընթերցող, քանզի լռում է բյուր ակների կարկաչը, դիտեք լուսանկարում պատկերված աստղադիտարանը: Ոչ, սա Բյուրականը չէ, մեզ այն տրամադրեց Չիլիի լեռներում տեղակայված Եվրոպական աստղադիտարանի ղեկավարությունը: Զարմանալու բան չկա. դու նստում ես ինքնաթիռ մինչև Փարիզ, այնտեղից ուղիղ Սանտ Յագո, վերջ: Իսկ Բյուրականի մասին գրելը չի ստացվում. մեկ ավտոբուսը չի գնում, մեկ տնօրենը տեղում չէ, ու մեկ էլ, ինչպես կասեր տիկին Էլմա Պարսամյանը.

– Մի անգամ ձեզ հոդված առաջարկեցի, չուզեցիք... Հիմա էլ չեմ ուզում գրել: Այդ հարցը լուծեք Խաչիկյանի հետ:

Տեղին է ասել՝ բա էսպես եղա՞վ, բա էսպես կարելի՞ է... Դե տիեզերքը մեծ է ու անսահման, ինչեր ասես չեն պատահի:

Միայն թե դիմանանք մինչև հաջորդ լուսային երկուշաբթի...

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

ԶԳՈՒՅՇ, ՄԵՋ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ...

Մենք արդեն հաշտվել ենք այն մտքի հետ, որ ցանկացած հեռախոս (անգամ բջջային) կարող են լսել: Եվ «հեռախոսային խոսակցությունը գաղտնիք չէ» արտահայտությունը հենց նշանակում էր, որ ինչ-որ շահագրգիռ կողմ կարող է լսել քեզ և, եթե պետք է, օգտագործել քո դեմ: Սիա ինչու ուրիշի ականջների համար չնախատեսված զրույցները տեղափոխվում էին բացօդյա տարածություն, հաճախ մարդաշատ վայրեր՝ անտեսանելի միկրոֆոններից ու հետաքրքրասեր ականջներից հեռու:

Սակայն հեռուստատեսային հաղորդակցության միջոցների բուռն զարգացումը այսօր մարդկանց դնում է մի անելանելի վիճակի մեջ, երբ նրանց ամենուր կարող է հետևել ու հետապնդել հեռուստախցիկի ամենատես աչքը, և մարդը հասկանում է, որ ինքը երբևէ մենակ չէ, որ նրա ամեն քայլը, շարժումը, խոսքը, դիմախաղը և անգամ տրամադրությունը պատկերվում է, արձանագրվում ու դրոշմվում ժամանակակից համակարգիչների անհատակ պահեստարաններում: Անտարակույս, զարհուրելի է ու քստմնելի, բայց սա է այսօրվա իրողությունը, և դրանից չես փախչի ու չես թաքնվի:

...Իսկ ամեն ինչ սկսվեց մի քանի տարի առաջ, երբ Ֆինլանդիայում շոնդալի աղմուկով տապալվեց ռուսական հետախուզական գործակալության ողջ ցանցը: Իրենք, հետախույզները և նրանց ղեկավարները Մոսկվայում, գլուխ էին կոտրում հասկանալու, թե ինչն էր դրա պատճառը: Մինչդեռ ֆիննական հակահետախուզությունը ցնծության մեջ էր, որովհետև ամբողջ գոյության ընթացքում դա նրանց միակ լուրջ հաջողությունն էր:

Ինչպես ասացինք, երկար ժամանակ «Ֆիննական աղետը» մնաց հանելուկ: Սակայն, ի վերջո, գաղտնիքը բացվեց:

Պարզվում է, որ այս աղմուկ հանած պատմության մեղավորները եղել են այսպես կոչված «սև արկղերը»: Իսկ Ֆինլանդական այդ «սև արկղերը» այն տեսախցիկներն են, որոնք դրված են Հելսինկիի և այլ խոշոր քաղաքների կենտրոնական և բանուկ հատվածներում՝ գաղտնի դիտելու և հսկելու անցուդարձը, մանավանդ քրեածին իրավիճակները: Այդ տեսախցիկները հնարավորություն ունեն տեսնելու բավական մեծ տարածություն, իսկ ղեկավարման կենտրոնում նստած օպերատորը ի վիճակի է երկար ժամանակ տեսախցիկի օբյեկտիվով հետևել հետաքրքրող օբյեկտին: Ավելին, տեսախցիկը ոչ միայն արձանագրում էր պահը, այլև նրա տեսածն ու նկարածը պահ էր տրվում համակարգչի հիշողությանը: Եվ անգամ ամիսներ անց ոստիկանությունը և հատուկ ծառայությունները կարող էին նորից ու նորից անդրադառնալ ու ուսումնասիրել, հետազոտել պատկերվածը: Եվ հենց այսպես էլ, համարենք պատահականորեն, ֆիննական հատուկ ծառայությունները բացահայտեցին խորհրդային հետախուզության ներկայացուցիչների (իսկ ռեզիդենտներին գիտեին) պարբերական և ծրագրված հանդիպումները իրենց համար աշխատող ֆիննական գործակալների հետ: Հիմա, կարծում ենք, հիշյալ մեծ ծախողման դասերը մտել են Ռուսաստանի անվտանգության ծառայության դպրոցների ծրագրերի մեջ:

Վերջին տարիներին տեսահսկողության նման համակարգեր հայտնվել են Արևմուտքի շատ խոշոր քաղաքների կենտրոնական և հատկապես հարուստ թաղամասերում, քանի որ այս երևույթը չափազանց թանկ հաճույք է:

Անցած ժամանակը ցույց տվեց, որ տեսա-հեռուստահսկողությունը չափազանց արդյունավետ է ընդհանրապես հանցագործությունների և մասնավորապես հանդուգն ու խոշոր հանցագործությունների դեմ մղվող պայքարում: Եվ սա այսպես է, որովհետև այն վայրերը, ուր մեծ փողեր են պտտվում, ուր հարստություն է կուտակված, գտնվում են հեռուստատեսախցիկների շուրջօրյա, ամենատես հսկողության տակ:

Ուսումնասիրելով տեսահսկողության արևմտյան համակարգը, ռուս մասնագետները մշակեցին նորագույն տեխնոլոգիաներ և ստեղծեցին սեփական «սև արկղեր», որոնք այսօրվա դրությամբ մի քանի անգամ գերազանցում են արտասահմանյան նմանատիպ համակարգերին: Նրա էական ու սկզբունքային առանձնահատկություններից մեկը «ռիսկի» օբյեկտների հայտնաբերումն է, երբ համակարգչային հատուկ ծրագիրը ինքնուրույն տեսախցիկների օբյեկտիվները ուղղում է վազող մարդկանց, ինչպես նաև անսպասելի, անբնական և կտրուկ շարժումներ կատարող անձանց վրա:

Այս համակարգի ստեղծողը ինչ-որ «Դ» ձեռնարկություն է, որը, հասկանալի պատճառներով, գովազդի կարիքը չունի:

Համակարգի փորձարկումը գրավեց ոչ միայն անվտանգության դաշնային ծառայության, ներքին գործերի նախարարության, այլև, և ավելի շատ, Մոսկվայի քաղաքապետարանի ուշադրությունը: Համակարգի առաջին պատվիրատուն դարձավ մայրաքաղաքի կենտրոնական օկրուգի պրեֆեկտուրան:

Վերջերս մշտապես գործող «սև արկղերի» ցանց (տասնյակ տեսախցիկներով) տեղադրվեց Մոսկվայի կենտրոնական փողոցներում: Այդ աշխատանքը արտոնեց Դաշնային անվտանգության ծառայությունը, բազան հատկացրեց մոսկովյան կենտրոնական օկրուգի ներքին գործերի վարչությունը, ֆինանսավորեց՝ քաղաքապետարանը: Նպատակը բացարձակապես բարի է՝ պայքար փողոցային հանցագործությունների և պոռնկության դեմ:

Հիմա քաղաքի կենտրոնում արտասահմանյան մեքենաներ փախցնողներին, գրպանահատներին և մյուս հանցագործներին հետևելը դարձել է խաղ ու պար: Ըստ որում, տեսաերիզտեսածայնագրությունները կարելի է նույնիսկ ներկայացնել դատարան, որպես ապացույց: Քաղաքը հեղեղած պոռնիկներից ազատվելը այնքան էլ հեշտ չէ: Նրանք թքած ունենան փողոցային պոռնկության տեսարանների նկարահանումների վրա: Հենց այդպիսի՞ տեսարաններ են տեսել:

Հաշվարկը նախատեսված «գիշերային թիթեռնիկների» հաճախորդների համար: Հազիվ թե հաջողակ գործարարն ու ամուսնացած բիզնեսմենը ուզենա, որ իրեն «բռնացնեն» Տվերյան փողոցում, աղջիկ որսալիս: Իսկ եթե հաճախորդները պակասեն, թռչնակներ էլ կամաց-կամաց կհեռանան կենտրոնից: Սակայն ամեն բարի նպատակ ու մտադրություն չէ, որ հաճելի է, կամ օգտակար ու անվնաս:

Պարզվեց, որ փողոցային պոռնիկներն ու մանր-մունր հանցագործները աննշան մանրուք են համեմատած այն պատկերների հետ, որ դրոշմվում էին համակարգիչների անտակ հիշողության մեջ:

Թաքնված տեսախցիկները ցուցադրում էին ոչ միայն իրավախախտողներին, դրամ շորթող ավտոտեսուչներին, գրպանահատներին և այլոց: Կադրում հայտնվեցին բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական հայտնի գործիչներ: Ըստ որում, պատիվ չբերող իրավիճակներում՝ գիշերային ակումբների ու կազինոների, էլիտար ռեստորանների շքամուտքերի մոտ. հաճախ հարբած և արատավոր շրջապատով: Մեկը մյուսի հետևից բռնկվում ու մարում էին աղմկահարույց միջադեպեր՝ այս կամ այն բարձրաստիճան ու հայտնի անձնավորությունների կյանքի մութ էջերի մասին: Ազդեցիկ քաղաքական խմբավորումները սկսեցին ամեն ինչ անել՝ հնարավորություն ստանալու օգտվել հեռուստա-տեսախցիկների գաղտնի նկարահանումների բարիքներից: Չէ՞ որ այդ նյութերը կարող են դառնալ հրաշալի միջոց՝ վարկաբեկելու և ոչնչացնելու քաղաքական հակառակորդներին ու մրցակիցներին:

Այսօրվա վիճակով Դաշնային անվտանգության ծառայությունը, հետախուզության գլխավոր վարչությունը, ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները եկել են մեկ ընդհանուր հայտարարի՝ համատեղ օգտագործել տեխնիկական այդ նորույթի ընձեռած արտասովոր հնարավորությունները: Մինչդեռ քաղաքական, օրենսդիր մարմինների ու խմբերի, մեծ բիզնեսի ներկայացուցիչները շարունակում են զզվռտոցը այդ ծառայությունից օգտվելու մենաշնորհի համար:

...Եթե հեռուստախցիկային փողոցային գաղտնի հսկողության նոր համակարգը լայնորեն օգտագործվի հատուկ ծառայությունների կողմից միայն, դրանում ոչ մի վատ բան չկա, ավելին՝ այն արդյունավետ կդարձնի նրանց աշխատանքը: Սակայն եթե այդ համակարգից օգտվելու հնարավորություն ստանա քաղաքական կամ հանցագործ որևէ հզոր խմբավորում, ապա դրա աղետալի հետևանքները անկանխատեսելի են և չափազանց վտանգավոր:

«Իհարկե, ոչ մեկը չգիտեր, հետևո՞ւմ են իրեն այդ պահին, թե՝ ոչ...

Բացառված չէ. որ գաղտնի հետևում էին բոլորին՝ ամբողջ քսան-չորս ժամ: Համենայն դեպս, կարող էին ուզած պահին սկսել հետևել քեզ: Քեզ ապրել էր պետք, և դու ապրում էիր բնազդի վերածված սովորության ուժով և այն գիտակցությամբ, որ քո յուրաքանչյուր բառը լսում են և քո ամեն մի շարժմանը՝ հսկում...»:

Զոն ՕՐՈՒԷԼԼ
Պատրաստեց՝
Իրինա ԴՈՒԲԻՆԻՆԱՆ

ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՎԱՐԱԳՈՒՅՐԸ ԲԱՑՎՈՒՄ Է

Աշխարհում ավելի ու ավելի լայն թափ են ստանում հնագիտական և հնէաբանական պեղումները, որոնք բացում են անցյալի շատ գաղտնիքներ ու նաև գուշակում մեր հետագա զարգացման ուղիները: Ֆրանսիական «Լյա ռեշերշ» («Հետազոտություն») հանդեսը ընդարձակ հոդված է նվիրել այդ խնդրին: Աշխարհի տարբեր անկյուններում՝ Մոնղոլիայում, Եգիպտոսում կատարված ուսումնասիրությունները օգնում են մեզ տեսնել ոչ միայն հեռավոր անցյալի կենցաղը, այլև մարդու կմախքների վրա նուկլեաթթվի օգնությամբ ստույգ որոշել դրանց տարիքը... Ահա թե ինչու նախնադարյան դամբարանադաշտերը դարձել են հնագետների ուսումնասիրությունների հիմնական նյութը: Մոնղոլիան հնագիտական երկիր չես համարի: Եվ ահա գիտնականների ուսումնասիրությունները կենտրոնացան այս երկրում: Մոնղոլները պատրաստակամ ընդունեցին գիտնականներին (նկար N 1), իրենց բնակարաններից մի քանի քայլի վրա գտնվող դամբարանադաշտը տրամադրելով հյուրերին: Իսկ ահա Եգիպտոսի հողը ոչ միայն բազում պատմություններ է պահում իր ընդերքում, այլև ծանոթ է հնագետներին (նկար N 2): Աղայիմայի դամբարանադաշտը իր ընդերքում պահում է մ.թ.ա. 3700 տարի առաջ թաղված մարդկանց կմախքները, խմբակային թաղումների վայրեր, որոնք ունեն հնագիտական նշանակության, արժեքավոր նյութ են տալիս մեր մոլորակի ու մարդկության զարգացման ուղու մասին:



ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԵԼԸ ՎՆԱՍ Է

Պարզվում է, ավտոմեքենա վարելիս կարևոր է ոչ միայն հմտությունն ու փորձը, ոգելից խմիչքի օգտագործումը, այլև... չեք հավատա, ...ընտանեկան վիճակը: Վերջերս կատարված մարդկանց ընտանեկան դրության վիճակագրական հաշվետվությունները, որոնք անց են կացվել ավտովթարների մեղավորների կամ փողոցային պատահարների մասնակիցների մեջ, երևան հանեցին ապշեցուցիչ արդյունքներ: Արձանագրվեց, որ ամուսնությունից հետո ավտովարորդների ճանապարհային վթարների ենթարկվելու հավանականությունը նվազում է մեկ և կես անգամ: Իսկ ամուսնալուծությունն, ընդհակառակը, ավտոպատահարների ենթարկվելու հավանականության վտանգը մեծացնում է երկու անգամ:

Ինչպես ենթադրում են հոգեբանները, ամուսնացած և ընտանիք ունեցող մարդիկ, ի տարբերություն ամուրիների, ավելի քիչ են ընկնում սթրեսների մեջ և դրա արդյունքում ավելի սառնասիրտ ու հավասարակշռված են վարում մեքենան:

Այնպես որ, հարգարժան տղամարդիկ, ամուսնացե՛ք և, եթե հնար ունեք, մի ամուսնալուծվե՛ք... հանուն ձեր և շրջապատի անվտանգության:



ԱՐԲԱՆՅԱԿԸ ՀՍԿՈՒՄ Է ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերական արբանյակների համար գտել են նոր զբաղմունք: Հիմա արդեն նրանք պիտի հսկեն, որ ավտոճանապարհներին վարորդները չգերազանցեն սահմանված արագությունը և պահպանեն երթևեկության կանոնները: Տիեզերական արբանյակների այս նպատակով օգտագործման ծրագիրը մշակվել է Լիդսի համալսարանում և կոչված է նվազագույնի հասցնել ճանապարհային վթարները: Ավտոմեքենայի մեջ տեղադրվելու է մինիհամակարգիչ, որն ուղիղ կապված է արբանյակի հետ և նրան է հաղորդում ամեն ինչ՝ տեղը, արագությունը, պահվածքը և այլն:

Ոստիկանները, որ անմիջական կապ ունեն արբանյակի հետ, շատ արագ կտեղեկանան, թե «երկրագնդի» որ մասում է գտնվում այս կամ այն ավտոմեքենան, ինչ արագությամբ է շարժվում և այլն:

Մինիհամակարգիչով կառավարելու մեխանիզմը հնարավորություն է ընձեռում անգամ կարգավորել մեքենայի արագությունը: Եթե ավտոմեքենան գերազանցում է սահմանված արագությունը, համակարգչային ծրագիրը անմիջապես դադարեցնում է բենզինի հոսքը դեպի շարժիչ, և մեքենան պարզապես կանգնում է ու առաջ չի գնում: Սույն ծրագրի ամենամեծ առավելությունը նրա չափազանց էժան լինելն է: Ընդամենը պետք է վճարել հաղորդիչն ավտոմեքենայում տեղադրելու համար:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԴՈՆՈՐ

Ճապոնացի գիտնականները «հավանություն» են ստացել բուծելու կենդանիներ, մարդկային օրգաններով: Խոսքն արդեն չի վերաբերում լոկ խոզերին, որոնց սիրտն ու լյարդը կարելի է պատվաստել մարդուն: Նորագույն հետազոտությունները այսօր հնարավոր են դարձնում մարդկային փողային բջիջները աճեցնել զանազան կենդանիների վրա: Ասենք հավ՝ մարդկային ականջներով, ջայլամ՝ մարդկային ոտքերով և այլն:

Այս հրաշալիքները կարող են իրականություն դառնալ մարդկային օրգանիզմի բջիջները ներմուծելով կենդանիների բեղմնավորված ձվաբջիջների մեջ:

Մարդկային օրգանների դոնորության հարցը մինչև օրս չափազանց բարդ խնդիր է: Որպեսզի վերցվի մարդկային մարմնի որևէ օրգան, պետք է ստանալ օրգանի տիրոջ կամ հարազատների համաձայնությունը: Պատվաստվող օրգանների համար հիվանդները պատրաստ են վճարել աներևակայելի գումարներ: Հենց այս հանգամանքն է, որ մարդկային օրգանների պատվաստումը ավելի ու ավելի է դառնում հանցագործ բիզնեսի աղբյուր:

Եթե ճապոնացի գիտնականների հետազոտությունների արդյունքները կյանքի կոչվեն (մի բան, որ նրանք միանշանակ երաշխավորում են), ապա մարդկային դոնոր օրգանի հայթայթումը դառնում է դյուրին: Վերցնում եք որևէ կենդանի՝ աճեցրած մարդկային որևէ օրգանով, «մատաղ եք անում»... և հիվանդ մարդը փրկված է:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ԹԵՐԹԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՈՎԱՆԱՎՈՐՉԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐՈՎ:
ԹԵՐԹԻ ԱՀՍ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ՀԱՄԱՐՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍՆԵՐԻ ԵՎ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅԱՄԲ:
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈ՞ՒՆ...

ԿՏՐԵՑԵ՛Ք ՁԵՌՔՍ

Մեկ տարի առաջ Նորզելանդացի Քլինթ Խելամը մտավ պատմության մեջ որպես այն առաջին մարդը, որին պատվաստել էին մեռած մարդու ձեռքը:

Լիոնի մերձակայքում զոհված ֆրանսիացի մոտոցիկլիստի ամբողջ թևը (ուսագոտուց մինչև դաստակը) շտապ հասցրին Նոր Զելանդիա: Վիրահատությունը տևեց 14 ժամ. միացրեցին ոսկորները, զարկերակային և մյուս երակները, նյարդերը, մկանները: Արդյունքում Քլինթը ունեցավ նոր ձեռք: Անցել է ուղիղ մեկ տարի: 50-ամյա Քլինթը հիմա խնդրում է վիրաբույժներին՝ վիրահատել և հեռացնել այդ ձեռքը, որովհետև այն «օտար է և իրենը չէ»: Նա համարում է, որ ինքը հիմա ավելի է հաշմված, քան այն ժամանակ, երբ այդ օտար ձեռքը չուներ: Պատվաստված ձեռքը ավելի հաստ է և երկար, քան Քլինթի հարազատ ձեռքը: Այդ պատճառով նա հաճախ պատվաստված ձեռքը թաքցնում է օտար աչքերից:

Բժիշկներն, իհարկե, համաձայն չեն հեռացնել Քլինթի պատվաստված ձեռքը և շատ զայրացած են, որ իրենց ծանր ու փայլուն աշխատանքը այդպես է գնահատվում:

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝
ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան – 19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 25.06.2002թ.
"ГИТУТЮН" ("Наука") – газета НАН РА